




ՊՐՈՖ. Ռ. Հ. ՅՈՒՅԱՆ

# ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄ



198 | 329

ՊԵՏՑՐԱՍ • 1936 • ՅԵՐԵՎԱՆ

170!

Arм.  
2-2965а

615.38,


ՀՈԽՀ ԱՐԺԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գրաֆ. Ռ. Հ. ՅՈՒ.ՅՈՒ.



# ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿԻՒՄ

Ա 35662



ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿԻՒՄ 9516

ԳՐԱՓՈԽ ՀՐԱՄԱՐԿԱՉՈՒԹՅՈՒՆ Օ ՅԵՐԵՎԱՆ 1936

Պատ. խմբագիր՝ թժ. Ա. Ղազարյան  
Տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան  
Մրգագրիչ՝ Աննիկ Գասպարջյան

Հքառ. 3515, Գլավլիուսի ղիազոր գ. 294, Պատվեր 22, Տիրամ 1060  
Հանձնված և արտադրության 1 նոյեմբերի 1935 թ.  
Ստորագրված և տպագրության 13 փետրվարի 1936 թ.

## ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ ՅԵՎ ՆԵՐԿԱՅՈՒՄ

Չափազանցություն չի լինի, յեթե ասենք, վոր արյան փոխներարկումը նույնքան հին ե, վորքան հին ե մարդկության պատմությունը։ Մարդկությունը դարերից ի վեր հետաքըրքը վել ե արյան պրոբլեմով և այդ հեղուկի փոփոխությունների մեջ դտել ե կենսունակության կամ տարրեր հիվանդությունների աղբյուրը։ Արանով ել հենց պետք ե բացատր ե զանազան ժողովուրդների սովորությունը՝ հիվանդությունների ընթացքում բաց թողնել «կեղտոտ» արյունը, կամ փոխարինել այդ արյունը թարմ, «ջահել» արյունով։ Դեռ հին Ելլադայում, դարերի մշուշապատ անցյալում կազմվեց „Cura Medeana“-յի առասպելը։ Համաձայն այդ առասպելի վհուկ Մեղեյան արյան փոխներարկման միջոցով կյանք և յերիտասարդություն եր վերադարձնում մարդկանց։ Արյան փոխներարկման համար հեռավոր անցյալում արյուն եյին վերցնում թե կենդանիներից և թե մարդկանցից, բայց համարյա միշտ ել այդ փորձերը անհաջողության ելին մատնվում։ պատճառն այն եր, վոր այն ժամանակներում դեռ լրիվ գաղափար չունեյին մարդկանց և կենդանիների արյան առանձնահատկությունների մասին։ Հազարավոր տարիների ընթացքում արյան փոխներարկման գործը յերբեմն մոռացության եր մատնվում, յերբեմն ել նորից բժշկականության ուշադրության կենտրոնն եր դառնում։ Այդ դրությունը շարունակվեց մինչև 1628 թվականը, վորից հետո Հարվեյի արյան շրջանառության մեխանիզմի հոչակավոր գյուտը մեծ զարկ տվեց արյան փոխներարկման գործի զարգացմանը։ Այս ժամանակաշրջանից հետո արյան փոխներարկումը դրվում ե արդեն դիտական հողի վրա, փորձեր են կատարվում կենդանիների վրա, վորպեսզի այդ փորձերի դրական արդյունքները հետազոտվ կիրառեն մարդկանց վերաբերմամբ։

Արյան փոխներարկման գործի զարգացման համար խիստ մեծ արդելք եր հանդիսանում այն, վոր այն ժամանակ կենդանիների և մարդկանց արյան առանձնահատկությունների մասին ներկայումս գոյություն ունեցող դիտելիքները խսպառ բացակայում ենին։ Պանուն եր, վոր 1862 թվականին ուշադրություն դարձրեց ագլյուտինացիոն հարցերի վրա, պարզաբանեց ագլյուտինացիայի պատճառները կենդանիների և մարդկանց արյան անհամատեղությունն եր։ Բարդություններից խուսափելու համար, նա առաջարկեց, մարդկանց փոխներարկել միայն մարդկանց արյուն։ Դժբախտաբար մինչև 1900-ական թվականները դեռ հայտնի չեր, վոր մարդկանց արյունն ել բաժանվում է վորոշ խմբերի, վոր հաճախ տարբեր մարդկանց արյունն ել տարբեր և լինում և հեշտությամբ կարող ե տեղիք տալ ագլյուտինացիայի։ Ագլյուտինացիայի յենթարկված արյունն ել իր հերթին, ինչպես հայտնի չե, տեղիք ե տալիս զանազան բարդությունների կամ անզամ մահ ե առաջացնում։ Յերբ Landsteiner-ը 20-րդ դարի սկզբներում հայտնաբերեց մարդկային արյան խմբերը, այդ ժամանակվանից ել հնարավոր յեղավ մեծապես զարկ տալ արյան փոխներարկմանը զանազան յերկրներում։

Մեծ խթան հանդիսացավ արյան փոխներարկման զարգացման համար նաև ամերիկական հայտնի վիրաբուժ Crile-ի կողմից 1905 թ. առաջարկված տեխնիկան. նա ինքը հաջողությամբ կատարել եր և առաջարկում եր արյուն ընդունողի (recipient-ի) և արյուն տվողի (donor-ի) անօթների միջև հաղորդակցություն ստեղծել, վորպեսզի արյունը մեկի յերակներից անցնի մյուսին։ Հետագայում սկսեցին գործադրել արյան անուղղակի փոխներարկումներ, կատարելով անօթների և խողովակների պարագինացում, վորը տեխնիկապես շատ հեշտ եւ հսկ յերբ Hustin-ը 1914 թվականին առաջարկեց արյան մակարդումը խանգարելու և արյունը վորոշ ժամանակով հեղուկային դրության մեջ պահելու համար գործածել natr. citricum, նա դրանով միանգամայն դյուրացրեց արյան փոխներարկման տեխնիկան։ Հենց այս առաջարկից հետո յեր, վոր սկսվեց իմպերիալիստական (1914—1918) մեծ պատերազմը, վորը և հսկայական հնարավորություններ ստեղծեց արյան փոխներարկումը

շատ մեծ ծավալով կիրառելու համար: Ոտարերկրյա բանակներում, գլխավորապես ամերիկական և անգլիական բանակներում արյան փոխներարկման կարիք զգացող վիրավորներին չեն թողել տուանց նման բուժման: Ալդպիսով մինչև պատերազմի վերջը կատարվում են արյան փոխներարկման հազարավոր փորձեր, վորոնք հնարավորություն են տալիս փրկել բազմաթիվ ծանր վիրավորների կյանքը: Պատերազմի ընթացքում արվում եյին գլխավորապես կոնսերվացիայի լենթարկված արյան փոխներարկումներ:

Բայց հին ոռւսական բանակում՝ իմպերիալիստական պատերազմի ընթացքում՝ չի կատարված արյան փոխներարկման վոչ մի դեպք: և այդ պատճառով ել խիստ արյունահոսությունից հազարավոր վիրավորներ են մեռել, չստանալով պատշաճ ոգնություն: Միայն պատերազմը վերջանալուց և Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո յենք տեսնում արյան փոխներարկման յեղակի դեպքեր Խորհրդային Ռուսաստանի տարրեր քաղաքներում: Այդ փոխներարկումները կատարվում եյին Լենինգրադում, Մոսկվայում, Խարկովում, Ոդեսայում և ուրիշ մեծ կենտրոններում: 1926 թվից հետո յեւ, վոր արյան փոխներարկման գործը մեր Միության մեջ սկսում ե շատ ուժեղ կերպով տարածվել: Այդ հանգամանքը զուգադիպում ե այն մոմենտին, յերբ Մոսկվայում արյան փոխներարկման գործի ենտուզիաստ բժիշկ Բոգդանովի ջանքերի շնորհիվ բացվում է արյան փոխներարկման ինստիտուտը—մի հիմնարկություն, վորը և գիտականորեն և զործնականորեն տարածում և զարկ ե տալիս արյան փոխներարկման գործին մեր միության սահմաններում: Արյան փոխներարկման ասպարիզում մեր Միությունը մինչև վերջին տարիները շատ յետ եր մնում արտասահմանյան յերկրներից: Բայց ներկայումս Մոսկվայի ինստիտուտի և նրա բազմաթիվ ֆիլիալների գիտական անձնակազմի արդյունավետ աշխատանքների շնորհիվ, արյան փոխներարկման գործում ևս մեր Միությունը վոչ միայն հասավ առաջնակարգ պետություններին, այլև նրանցից առաջ անցավ:

Արյան փոխներարկման Մոսկվայի կենտրոնական ինստիտուտը մեծ աշխատանքներ ե կատարում, ամեն ինչ ի սպաս դնելով յերկրի պաշտպանության մեծ գործին՝ ապահովելու կարմիր մարտիկների կյանքը դալիք մեծ պատերազմում: Կենտրո-

Նական ինստիտուտը ներկայումս ունի մոտ 120 ֆիլիալ Միության մեծ քաղաքներում, արդյունաբերական կենտրոններում։ այդ ֆիլիալները կատարում են գիտական և գործնական մեծաշատանք, տարածելով արյան փոխներարկման թեորիան և պրակտիկան մեր Միության սահմաններում։

Մոսկվայի Արյան Փոխներարկման կենտրոնական ինստիտուտի մի ֆիլիալն ել Հայաստանի ֆիլիալն է, վորը բացվել ե Յերևանում 1932 թվին։ Այդ բաժանմունքը քանի գնում ուժեղանում և ամրանում է։ Հայաստանի բաժանմունքն իր հերթին կազմակերպում է Հանրապետության կենտրոնական և արդյունաբերական վայրերում արյան փոխներարկման կայաններ։

Մեր բաժանմունքն իր կայաններով ներկայումս զբաղված է արյան փոխներարկման դաշտավարների պրոպագանդայով, կադրերի, պատրաստման գործով, գիտահետազոտական աշխատանքներով։ Նմանապես մեր հանրապետության բուժհիմնարկներում արյան փոխներարկման գործն արդեն դառնում է առորյա բժըշկականության հզոր միջոց՝ ծանր հիվանդների փրկության տեսակետից։ Աչքի առաջ ունենալով գլխավորապես յերկրի պաշտպանության շահերը և կարմիր մարտիկների առողջության հարցը սպասվելիք (և անխուսափելի կապիտալիստական իրավակարգում) պատերազմներում, Հայաստանի արյան փոխներարկման ֆիլիալը հսկայական աշխատանք ունի կատարելու մոտիկ ապագայում։

## ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՑԵՎ ՀԱԿԱՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ

Վերջին տարիների ընթացքում արյան փոխներարկումը լայն ծավալ ստանալով թե արտասահմանում և թե մեր Միության սահմաններում, գործադրվում է գիտական բժշկականության համարյա բոլոր բնագավառներում։ Բուժման ամեն մի նոր մեթոդ կիրառելիս, յերբեմն նկատվում է անտեղի վոգեորություն, և հաճախ այդ նոր մեթոդը կիրառվում է այնպիսի պաթոլոգիկ պրոցեսների նկատմամբ, վորոնք ավելի յեն բարդանում նման բուժման հետևանքով։ Արյան փոխներարկման մեթոդը, վորը բուժական մի հզոր միջոց է և արժանացել է լուրջ ուշադրության, զուրկ չի մնացել նման սխալներից։ Այդ ե պատճառը։

վոր արյան փոխներարկում կատարելիս, ամենալուրջ ուշադրությունը պետք է դարձնել այն հարցի վրա, թե ինչ ցուցմունքներ գոյություն ունեն, կամ ինչ արդյունքներ կարելի յե ստանալ տվյալ հիվանդությունը արյան փոխներարկման միջոցով բուժելիս։ Արյան փոխներարկման բնագավառում այդ հարցն ել ավելի սուր բնույթ ե ստանում, վորովհետև արյունը բավականին թանգարժեք նյութ է, և մյուս կողմից ել արյան փոխներարկման անտեղի կամ սխալ կիրառումը կարող է տեղիք տալ շատ լուրջ բարդությունների։

Ներկայումս մեր Միության գիտական բժշկականության մեծ հիմնարկները շատ լուրջ կերպով զբաղվում են արյան փոխներարկման իսկական ցուցմունքները և հակացուցմունքները վորոշելու հարցով։ Շատ մանրամասնորեն զբաղվեց այդ հարցով նաև Լենինգրադի արյան փոխներարկման կոնֆերանսը, վորը հրավիրվել եր 1933 թ. գեկտեմբեր ամսին։ Կոնֆերանսը մշակել է անգամ մի տախտակ, վորով անհրաժեշտ ե զեկավարվել զանազան հիվանդությունների նկատմամբ արյան փոխներարկման ցուցմունքները և հակացուցմունքները վորոշելիս։

Հենվելով անցյալում կատարված արյան փոխներարկման փորձի, ստացված արդյունքների և գիտական հետազոտությունների տվյալների վրա, ներկայումս հնարավոր ե նշել արյան տրանսֆորմիայի համար ցուցմունքների լերկու մեծ խումբ՝ բացարձակ (արսոլյուտ) և հարաբերական ցուցմունքներ։

Արսոլյուտ ցուցմունք են անվանում արյան փոխներարկման անհրաժեշտությունն այն հիվանդությունների ընթացքում, վորոնց բուժումը նման մեթոդով տալիս ե անժիստելի, չափազանց ցայտուն դրական արդյունքներ։ Հարաբերական ցուցմունքն այն ե, յերբ տվյալ հիվանդության նկատմամբ արյան փոխներարկումը տալիս ե վորոշ դրական արդյունք, բայց վոչ այնքան ցայտուն կամ վոչ միշտ արտահայտված։

## ԱԲՍՈԼՅՈՒՏ ՑՈՒՑՄՈՒՔՆԵՐ

Խիրուրգիայի և մանկաբարձության բնագավառում արյան փոխներարկման ամենակարևոր և ամենաարդյունավետ ցուցմունքը—դա պայքարն ե սուր արյունահոսությունների հետեւ-

վանքների դեմ: Բազմաթիվ հեղինակների փորձերով ապացուցված է, վոր կենդանիներն իրենց արյան 70—75% կորցնելով, համարյա միշտ մահանում են արյան ճնշման խիստ անկումից, անոթների դատարկումից, վորի հետևանքով յերկայնածիդ ուղեղի կենտրոնները պարակիվ յեն յենթարկվում, կանգ ե առնում կենդանու շնչառությունը և դադարում ե սրտի աշխատանքը: Լցնելով արյունաքամ յեղած կենդանու անոթալին համակարգի մեջ ֆիզիոլոգիական, գլյուկոզայի, գումմի արարիկումի և Ռինգեր-Լոկլի լուծույթներ, կարելի յե մի քանի ժամերով յերկարացնել կենդանու վտանգված կյանքը, բայց ելի շատ հաճախ նրանք մահանում են: Արյան փոխներարկումն ե միայն, վոր հնարավորություն ե տալիս մեծ չափով փրկել կենդանիների կյանքը: Պրոֆ. Շամովին հաջողվել ե կյանք վերադարձնել 90% ով արնաքամ յեղած և համարյա մեռած կենդանիներին՝ միայն արյան փոխներարկման միջոցով:

Այս հանդամանքը հսկայական նշանակությունունի յերկրի պաշտպանության գործում, վորովհետև հնարավորություն ե ստեղծում նորից կյանք տալ հարյուրավոր ու հազարավոր արնաքամ յեղած և շոկի յենթարկված ծանր վիրավորված մարտիկներին: Նման վիրավորների նկատմամբ արյան փոխներարկումը տալիս ե չափազանց զգալի դրական հետևանքներ: Ուրեմն պատերազմի ժամանակ արյան փոխներարկումը բուժական հղոր միջոց ե: Միևնույնը պետք ե ասել նաև ծննդաբերությունների, վիժումների կամ այլ պատճառներով արնաքամությունից մեռնող կանաց նկատմամբ: Պատերազմի պայմաններում ուղղմական տրավմաների դեպքում, կամ հենց խաղաղ պայմաններում արդյունաբերական, գյուղատնտեսական և այլ տրավմաներից շատերը յենթարկվում են շոկի, վորից և հաճախ մահանում են: Մինչև վերջին տարիները բժշկականությունը համարյա անզոր ե յեղել պայքարել նման ծանր հիվանդությունների դեմ: Բայց ներկայումս մենք ունենք պայքարի մի հղոր միջոց, այն ե՝ արյան փոխներարկումը, վորը շոկի յենթարկվածների մեծագույն տոկոսին կյանք ե վերադարձնում: Շատ հաճախ արնաքամ յեղածները միևնույն ժամանակ և շոկի յեն յենթարկվում: Իմպերիալիստական վերջին պատերազմի ժամանակ ամերիկական, անգլիական և այլ ոստաբերկրյա բանակներում հազարավոր նման

մարդկանց կյանքը փրկել են արյան փոխներարկման միջոցով։  
Բատ Verebely-ի, յեթե մինչև արյան փոխներարկան կիրառումը  
վերոհիշյալ տառապյալները մահացել են  $80^{\circ}/_0$ -ով, արյան փոխ-  
ներարկումից հետո նրանք կյանք են վերստացել դարձյալ  
 $80^{\circ}/_0$ -ով։ Բոլորովին գունատ ու մահամերձ հիվանդները, վորոնց  
պուլսը դժվարությամբ է նշմարվում, մարմինը սառն և և զի-  
տակցությունը խանգարված, արյան փոխներարկման ընթաց-  
քում համարյա միշտ կյանք են ստանում, բոլորովին առողջա-  
նում են. հենց ոպերացիոն սեղանի վրա կարելի յե տեսնել,  
ինչպես կարմիր գույն և գալիս նրանց յերեսներին, աչքերն են  
սկսում փայլել, պուլսը և շնչառությունը կանոնավորվում են,  
և հիվանդներն սկսում են ճանաչել-իրենց շրջապատը։ Առը  
արնաքամության հետևանքների դեմ հաջող պայքարելու հա-  
մար անհրաժեշտ է մեծ քանակությամբ արյուն փոխներարկել  
(500,0—700,0 կամ ել ավելի)։ Միանգամայն ապացուցված է,  
վոր փոխներարկված արյունը, լցնելով հիվանդի դատարկված  
անոթները, նորից վերականգնում ե հյուսվածքներում նյութերի  
փոխանակությունը, սնունդ և մատակարարում անոթաշարժիչ  
և շնչառության կենտրոններին, կանոնավորում ե սրտի աշխա-  
տանքը և ալղակիսով նորից կենդանացնում ե կիսամեռ հիվանդ-  
ներին։ Մեր ունեցած համեստ փորձը այն է սուր արյունաքամու-  
թյան և շոկի պատճառով կատարած 62 տրանսֆուզիաները նմա-  
նապես գալիս են հաստատելու վերոհիշյալ հեղինակի կարծիքը։ Ար-  
սուլուտ ցուցմունքների թվին են պատկանում նաև այն տրանս-  
ֆուզիաները, վորոնք կատարվում են ծանր հիվանդների նկատմամբ  
նախ և հետոպերացիոն շրջանում։ Նմանորինակ արյան փոխներար-  
կումները բարձրացնում են հիվանդ որգանիզմի դիմադրողականու-  
թյունը և նպաստավոր պայմաններ են ստեղծում նրանց առող-  
ջությունը վերականգնելու համար։ Արսուլուտ ցուցմունք է,  
յերբ արյան փոխներարկումը փոքր դոզաներով են կատարում  
վորպես հեմոստատիկ միջոց արյունահոսությունը դադարեցնե-  
լու համար։ Բժշկական առորյա աշխատանքի ընթացքում հաճախ  
են պատահում քրոնիկական արյունահոսություններ տարբեր  
հիվանդությունների պատճառով։ Ալղակիսի արյունահոսություն-  
ներ նկատվում են վորովայնալին տիֆի ժամանակ, ստամոքսի  
կամ տասներկումատնյա աղիքի խոցերից, կանանց սեռական  
որդաններից, հեմոպետիկ որգանների տարբեր խանգարումների։

Ահիվանդությունների ընթացքում: Արյունահոսությունները նման գեղքերում լինում են հարատե, որերի, յերբեմն շարաթների ընթացքում քիչ կամ շատ քանակությամբ, այդ արյունահոսությունները հաճախ չեն լինթարկվում բուժման վոչ մի մեթոդով, բոլորովին հլուծում, թուլացնում են հիվանդներին և հաճախ ել մահ են պատճառում: Նման արյունահոսությունների դեմ պայքարելու ամենառաջեղ միջոցը արյան փոխներարկումն ե՝ փոքր քանակով: Մեր բաժանմունքի պրակտիկայում արդեն ունեցել ենք մի շարք համոզիչ ապացուցներ. 1933 թ. աշնանը առաջին հիվանդանոցում բուժվում եր ստամոքսի խոցով տառապող մի կին: Որերով այդ կինը արյուն եր վորձկում, բոլորովին թուլացել, հլուծվել եր. զանազան տեսակի միջոցառումները նպատակին չելին հասցնում և հիվանդը կանգնած եր մեծ վտանգի առաջ: Միայն մի անգամ կատարած արյան փոխներարկումը, այն ել 50,0 արյունը—փրկեց հիվանդի կյանքը և հենց նույն որն ել իսպառ վերացրեց արյունահոսությունը: Մեզ վրա ուժեղ տպավորություն ե թողել նաև մի ուրիշ դեպք. 1933 թ. ոգոստոսին կլինիկական ինստիտուտի Յ-րդ վիրարուժական կլինիկա լեր բերված մի հիվանդ կին չափաղանց ծանր դրության մեջ, համարյա առանց պուլսի: Այդ կինը տառապում եր trombopenia secundaria հիվանդությամբ, նրա բոլոր լորձնաթաղանթներից արյուն եր հոսում և վոչ մի բուժում նպատակին չեր հասնում: Յերեք շաբաթվա ընթացքում այդ կինը բուժվել ե տանը, բայց արյունահոսությունը քթից, ընդերքից, ստամոքսից, հեշտոցից չի դադարել: Թե Յ-րդ վիրարուժական և թե թերապեվտիկ կլինիկաներում հիվանդի արյունահոսությունը դադարեցնելու համար չորս անգամ արյան փոխներարկում ե կատարված, 50,0 մինչև 120,0:

Կարճ ժամանակամիջոցում այդ փոխներարկումներից հետո արյունահոսությունը բոլորովին դադարեց և այդ կինն առողջ դրությամբ դուրս գրվեց հիվանդանոցից:

Քրոնիկական արյունահոսությունները դադարեցնելու նպատակով անպայման պետք ե արյան փոխներարկում կատարել քիչ քանակությամբ, այն ե 50,0-ից մինչև 200,0: Այելի մեծ քանակությունը, բարձրացնելով արյան ճնշումը կարող ե սաստկացնել արյունահոսությունը: Արյան փոքր քանակություն փոխներարկելով նկատի ունեն գլխավորապես նրա (արյան) ստիմու-

Այստիվ հատկությունն ու ներգործությունը, մինչդեռ սուբ արյունահոսությունների հետևանքները վերացնելու նպատակով ընդունված է արյուն փոխներարկել մեծ քանակությամբ։ Այդ է պատճառը, վոր սուբ արյունահոսություններից հետո, կամ շոկի պատճառով փոխներարկում են մոտավորապես  $600-700,0$  արյուն։ Ամերիկական բժիշկները արյան փոխներարկում են կատարում մինչև  $1000$ , կամ ել ավելի։ Արյան մեծաքանակ փոխներարկում ( $500,0$ -ից վոչ պակաս) ունի այսպես կոչված սուբստիտուցիոն (փոխարինող) նշանակություն, այսինքն, նման դեպքերում հիվանդների կորցրած արյունը փոխարինվում է նոր արյամբ, վորը վերցվում է դոնորներից և ներարկվում է հիվանդների (վնասվածների) յերակների մեջ։

## ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Նշելով մի քանի հիվանդությունների նկատմամբ ներկայումս բոլոր հեղինակների կողմից ընդունված արյան փոխներարկման բացարձակ ցուցմունքները, միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում հիշատակել այն բոլոր հարաբերական ցուցմունքները, վորոնք գոյություն ունեն զանազան հիվանդությունների նկատմամբ Հարաբերական տերմինը, ինչպես վերն ելինք նշել, պետք է հասկացվի այն իմաստով, վոր արյան փոխներարկումները նման դեպքերում, ճիշտ ե, տալիս են դրական արդյունքներ, բայց վոչ այնքան կայուն և աչքի ընկնող արդյունքներ, վորոնք նկատվում են արտոլլուտ ցուցմունքներ ունեցող հիվանդությունների ժամանակ։ Վորոշ դեպքերում արյան փոխներարկումը վորպես բուժման հզոր մեթոդ, մեծ դեր է խաղում զանազան քիմիական նյութերով տեղի ունեցած թունավորումների դեպքում։ Մեր քիմիական արդյունաբերությունը հետզհետեւ զարգանում է, և քիչ չեն քիմիական թունավորումների դեպքերը։ Մոսկվայի Արյան Փոխներարկման ինստիտուտի պրակտիկայում կան դիտողություններ 20 բանվորի նկատմամբ վորոնք թունավորված են յեղել անիլինով։ Նախորոք նրանցից արյուն և բաց թողնված յեղել և փոխարինված ե մեծ քանակությամբ ( $500,0-800,0$ ) թարմ արյունով։ Փորձը դրական արդյունքներ է տվել։ Արյան փոխներարկման միջոցով զանազան

թունավորումների բուժումը հսկայական նշանակություն պետք է ունենա գլխավորապես հետագա պատերազմների պայմաններում, իերք գործ են ածվելու հարյուրավոր թունավոր նյութեր (թ. Ն.): Այս բնագավառում արյան փոխներարկումն ամենադրական արդյունք պետք է տա գլխավորապես այն թունավորումների դեմ, վորոնք մեծ փոփոխություններ կամ քայքայումներ են առաջացնում արյան բաղադրության մեջ: Եքսպերիմենտները կենդանիների վրա միանգամայն ապացուցում են այդ:

Հարաբերական իմաստով քիչ դեր չի կատարում արյան փոխներարկումը նաև զանազան վարակների դեմ մղվող ոլալքարի գործում: Անհրաժեշտ ենք համարում նշել արյան ընդհանուր վարակի դեմ (սեպսիս, սեպտիկո-սլիցեմիա) կիրառվող արյան փոխներարկման հսկայական նշանակությունը: Թե գրականության մեջ լեղած տվյալները և թե մեր ֆիլիալի ու իր բաժանմունքների փորձը միանգամայն ապացուցում են այդ: Արյան ընդհանուր վարակի դեմ պետք է կատարել արյան պարբերական փոխներարկումներ այն ել փոքր քանակությամբ (200,0) արյունով: Անպայման մեծ նշանակություն ունի նաև փոխներարկման ճիշտ ժամանակը վորոշելը: Մեր ֆիլիալի աշխատակիցների կողմից (բժ. Գ. Ազարյան) նման դիտողություններ կատարվում են, և հարցն ավելի պարզաբանելու նպատակով փորձեր են կատարվում նաև կենդանիների վրա:

Վերջին տարիների ընթացքում արյան փոխներարկում են կատարում նաև զանազան վարակիչ հիվանդությունների դեմ: աչքաթող չեն արվում նաև մանկական վարակումները: Robertson-ը մեծ քանակությամբ արյան փոխներարկում է կիրառել ծծկեր լերեխաներին՝ կարմիր քամու, քութեշի, աղիքալին սուր վարակների և այլ հիվանդությունների դեմ: Նրան հաջողվել ե նման միջամտությամբ լերեխաների բարձր մահացության տուկուր զգալապես իջեցնել: Մեր Միության մեջ արյան փոխներարկումը լերեխաների վարակումների դեմ այնքան ել չի տարածված: Շատ հավանական ե, վոր և այս բնագավառում արյան փոխներարկումը դժու իր պատշաճ տեղը:

Քրոնիկական անեմիաների բուժման համար նույնպես ցուցմունքներ կան արյան փոխներարկումներ կատարելու համար: Գլխավորապես լավ արդյունքներ են ստացվում այն ժամանակ,

յերբ յերկրորդային անեմիան առաջ ե գալիս քրոնիկական արլունահոսությունների հետեանքով (թութք, արգանդի ֆիբրոմիոմա, ստամոքսի խոց և այլն): Նմանապես լավ արդյունքներ կարելի յե ստանալ հիպորեզեներատոր և պերնիցիոզ անեմիաների ժամանակ: Նման դեպքերում արյան փոխներարկումները նպատակահարմար ե կատարել փոքր (200—250,0) դոզաներով:

Մեր Փիլիալի պրակտիկայում յեղել են քրոնիկական անեմիաների մի քանի դեպքեր, վորոնք դրական արդյունքներով բուժվել են հաճախակի արյան փոխներարկումների միջոցով:

Միանգամայն անհնարին ե նշել այն բոլոր հիվանդությունները, վորոնց բուժման համար արյան փոխներարկում ե կիրառվում: Իհարկե յերբեմն նկատվում ե անտեղի վոգեվորություն, վորից միայն մնաս ե ստացվում և վորը հարվածում ե այդ բուժական մեթոդի զարգացմանը և պատշաճ տարածմանը: Ահա այդ ե պատճառը, վոր արյան փոխներարկման համար վորոշվում են միանգամայն ճիշտ արսովյուտ (բացարձակ) և հարաբերական ցուցմունքներ, վորոնց թիվը հետզհետե աճում, բազմանում ե: Իհարկե և այս բնագավառում ժամանակի ընթացքում կալարզվեն և կլուսաբանվեն ներկայումս գոյություն ունեցող բոլոր մութ հարցերը:

## ՀԱԿԱՑՈՒՑՄՈՒՅՆՔՆԵՐ

Արյան փոխներարկումը, ինչպես բուժման մի սքանչելի մեթոդ, կարող է մնասել հիվանդին և հաճախ ել մահ պատճառել, յեթե տեղին չի կիրառվում: Այդ ե պատճառը, վոր նախքան արյան փոխներարկման կիրառումը, անհրաժեշտ ե լուրջ կերպով մտածել ցուցմունքների մասին, կամ հիվանդի դրության մասին, այն մասին, թե հնարավոր ե արդյոք արյան փոխներարկում կատարել տվյալ հիվանդության դեպքում: Ամենալուրջ հակացուցմունքներն արյան փոխներարկման համար սրտի որգանական արատներն են (դեկոմպենսացիա), արյան ճնշման բարձրացումը, արյան շրջանառության խանգարումները փոքր ողակում: Նմանապես պետք ե խուսափել արյան փոխներարկումից յերկամների հիվանդությունների, նեֆրիտների, տուբերկուլոզի և այլ յերիկամային հիվանդությունների դեպքերում:

Բոլորովին չի կարելի արյան փոխներաբեկում կատարել թոքերի բորբոքման և լսարդի վորոշ հիվանդությունների (ցիրրող) ժամանակ։ Հետզհետե հակացուցմունքների տախտակը ավելի յեցածվում և կոնկրետանում։

## ԱՐՅԱՆ ԽՄԲԵՐԸ

Միանգամայն ճիշտ և այն դարձվածքը, թե «արյունն որպանիզմի հայելին ե»։ Կար ժամանակ, յերբ բժշկության մեջ գերիշող դերը պատկանում եր մորֆոլոգիալին, և միայն բջիջների կառուցվածքով մի որդանիզմը տարբերում ելին մյուսից։ Բայց 19-րդ դարի վերջերից և գլխավորապես 20-րդ դարի սկզբանից ուժեղ թափով սկսեց զարգանալ և հումորալ ուղղությունը և դրա հետ շիճուկարանությունն իր բոլոր առանձնահատկություններով։ Հայտնի յեղավ, վոր տարբեր կենդանիներ, ինչպես նաև մարդիկ զանազանվում են իրարից վոչ միայն իրենց բջիջների կամ հյուսվածքների կառուցվածքով, այլ և իրենց արյունով, շիճուկով ու մնացած բոլոր տեսակի հյութերով։ Բայց գըշխավոր ուշադրությունը սկսեցին դարձնել արյան և նրա առանձնահատկությունների վրա։ Դեռ 1863 թվականին եր, յերբ առաջին անգամ Panum-ը մատնանշեց կենդանիների և մարդկանց արյան տարբերությունը և հայտնաբերեց այդ տարբեր արյունների փոխներարկման հետևանքով առաջացած դժբախտությունների պատճառը։ 1874 թ. Landois-ն մահը՝ ոտար արյան փոխներարկումից հետո վերագրեց փոխներարկվող արյան կարմիր գնդիկների ազլուտինացիային և հետագա հեմոլիզին՝ ընդունողի որդանիզմի մեջ։ Այդ հեղինակը ապացուցեց, վոր իրոք դոնորի արյան երիտրոցիտները կարող են ընդունողի արյան շիճուկով քայլայվել և հաճախ սպանել ընդունողին, յեթե ընդունողի և արյուն տվողի արյունները տարբեր են։ Իսկ 1900 թվականին Shattock-ը միանգամայն ապացուցեց այն, վոր ոտար են վոչ միայն տարբեր կենդանիների արյունները, այլև տարբեր մարդկանց արյունը։ Առաջին անգամ նա նկատեց, վոր մարդկանց արյունները իրոք տարբեր են, վոր մեկի շիճուկը ազլուտինացիայի յեցնթարկում մյուսի արյան կարմիր գնդիկները։ Այսպիսով բացի հետերոազլուտինացիայից, սկսեցին խոսել իզոագ-

լյուտինացիայի մասին: Հետերոագլյուտինացիա յեն անվանում  
այն յերևույթը, յերբ տարբեր ցեղերին (կենդանիներին) պատկանող  
արյուններն իրար խառնելիս՝ նրանք կորցնում են իրենց արտա-  
քին տեսքը. մեկի երիտրոցիտները ի մի յեն հավաքվում մյուսի  
շիճուկով. այդ երիտրոցիտները կազմում են փաթիլներ, հետագա-  
յում քայլայվում, հեմոլիզի յեն յևնթարկվում: Իգուագլյուտի-  
նացիա յեն անվանում այն յերևույթը, յերբ վերոհիշյալ բոլոր  
փոփոխություններն առաջանում են մարդկանց կամ միևնույն  
ցեղի արյունների խառնուրդներից. որինակ՝ յեթե ագլյու-  
տինացիան առաջանում է յերկու մարդկանց կամ յերկու ձիերի  
արյունները խառնելուց:

Բազմաթիվ փորձերից հետո Landsteiner-ը 20-րդ դարի  
սկզբներին ապացուցեց, վոր մարդիկ, ըստ իրեց արյան, բա-  
ժանվում են յերեք խմբերի և այդ խմբերից մեկը մյուսին կա-  
րող է արյուն տալ կամ ընդունել նրանից: Ըստ Landsteiner-ի  
դասակարգման, նկարագրվեցին մարդիկ, վորոնց շիճուկը ագ-  
լյուտինացիայի յեր յենթարկում ուրիշ խմբի արյան կարմիր  
գնդիկները, բայց այդ մարդկանց արյան կարմիր գնդիկներն  
ուրիշ խմբերի շիճուկներով ագլյուտինացիայի չեն յենթարկ-  
վում: Այդ մարդիկ պատկանում են առաջին խմբին: Յերկրորդ  
խմբին պատկանող մարդկանց արյունն, ըստ Landsteiner-ի,  
ագլյուտինացիայի յե յենթարկում միայն 3-րդ խմբի արյան  
կարմիր գնդիկները: Իսկ յերրորդ խմբի անհատների արյան  
շիճուկը ագլյուտինացիայի յե յենթարկում միայն 2-րդ խմբի  
արյան կարմիր գնդիկները:

Բայց հետագայում Landsteiner-ի աշակերտները և մի շարք  
այլ հեղինակներ նկարագրեցին նաև այնպիսի անհատների, վո-  
րոնց արյան շիճուկը վոչ մի խմբի երիտրոցներ ագլյուտինա-  
ցիայի չի յենթարկում, իսկ իր երիտրոցիտներն այլ խմբերի  
շիճուկներով ագլյուտինացիայի յենթարկվում են: Այդ անհատ-  
ները ըստ իրենց արյան առանձնահատկությունների, պատկա-  
նում են չորրորդ խմբին:

Այսպիսով մարդիկ ըստ իրենց արյան առանձնահատկու-  
թյունների բաժանվում են չորս խմբի: առաջին, յերկրորդ, յեր-  
րորդ և չորրորդ: Ճիշտ է, վերջերս նկարագրվում են նաև 5-րդ,

Յորդ խմբեր ու յենթախմբեր, բայց պետք ե ասել, վոր ալգնոր խմբերը կամ յենթախմբերը դեռևս ավելի շատ տեսական, քան գործնական նշանակություն ունեն:

Արյան վերոհիշյալ չորս խմբերը մտնում են թե Jansky-ի (1907) և թե Moss-ի դասակարգման մեջ, բայց միայն այն տարբերությամբ, վոր Jansky-ի կլասիֆիկացիայի (դասակարգման) առաջին խումբը համապատասխանում է Moss-ի կլասիֆիկացիայի չորրորդ խմբին և ընդհակառակը:

Ներկայումս պետք ե ասել, վոր ամենաընդունվածը ե առածվածը Jansky-ի կլասիֆիկացիան եւ:

Արյան փոխներարկումների ընթացքում ծանր բարդություններից խուսափելու համար շատ անհրաժեշտ ե, վոր միևնույն քաղաքում կամ ավելի լավ միևնույն յերկրում ընդունվի միայն մի դասակարգում, արյան խմբերի մի նոմենկլատուրա: Այդ հարցում ստարիլիզացիան չափազանց մեծ նշանակություն ունի:

## ԱՐՅԱՆ ԽՄԲԵՐԻ ԹԵՌՈՒԱՆ

Տարբեր արյունների խառնուրդներից առաջացած ագլյուտինացիան ներկայումս բացատրում են Landsteiner-ի, Dungeler-ի և Huischfeld-ի կողմից առաջարկած ագլյուտինների ու ագլյուտինոգենների թեորիայով: Համաձայն այդ թեորիայի, մի զույգ ագլյուտինին կա շիճուկների մեջ և մի զույգ ագլյուտինոգեն՝ երիտրոցիտների մեջ: Յելնելով այդ լենթագրությունից, կարելի լի ասել, վոր 1-ի, 2-րդ և 3-րդ խմբերի շիճուկները, վարոնք ագլյուտինացիալի լեն յենթարկում այլ խմբերի կարմիր գնդիկները, իրենց շիճուկների մեջ ունեն ինչ վոր, երիտրոցիտները ի մի հավաքող, իրար միացնող ագլյուտինացիոն նյութեր՝ «ագլյուտինիններ». մինչդեռ 4-րդ խմբի շիճուկը զուրկ ե այդ ագլյուտինիններից, վորովհետև 4-րդ խումբը բոլոր խմբերից ել կարող ե արյուն ընդունել: Մյուս կողմից 2-րդ, 3-րդ և 4-րդ խմբերի երիտրոցիտներն այս կամ այն խմբի շիճուկների հետ խառնելիս, յենթարկվում են ագլյուտինացիայի, մինչդեռ

առաջին խմբի երիտրոցիտները, ինչ խմբի շիճուկների հետ ել վոր խառնվեն, վոչ մի դեպքում ագլյուտինացիայի չեն յենթարկվում։ Ուրեմն առաջին խմբի երիտրոցիտները տարբերվում են այլ խմբերի երիտրոցիտներից։ Յենթադրում են, վոր 2-րդ, 3-րդ և 4-րդ խմբերի երիտրոցիտների մեջ գոլություն ունի ինչ վոր մի նյութ, վորի շնորհիվ երիտրոցիտներն ագլյուտինացիայի յեն յենթարկվում, մինչդեռ առաջին խմբի երիտրոցիտները զուրկ են այդ նյութից։ Վերոհիշյալ նյութը, վորն ինչպես յենթադրվում է, պարունակվում է երիտրոցիտների մեջ, կոչվում է ագլյուտինոգեն։ Այդ պատճառով ել Dunger-ը և Hirschfeld-ը յենթադրում են, վոր՝

1) Երիտրոցիտների ագլյուտինացիայի համար անհրաժեշտ է յերկու ֆակտորների առկայություն՝ ագլյուտինին շիճուկի մեջ և ագլյուտինոգեններ երիտրոցիտներում.

2) Այդ ֆակտորներից անհրաժեշտ է յերկու գույգ. ագլյուտինոգեն Ա և նրան համապատասխանող ագլյուտինին ա. Յերկրորդ գույգն է ագլյուտինոգեն Բ և նրան համապատասխանող ագլյուտինին Յ.

3) Ագլյուտինացիան առաջանում է միայն այն դեպքում, յերբ ագլյուտինոգեն Ա-ն հանդիպում է ագլյուտինին Ա-ին և ագլյուտինոգեն Բ-ն՝ ագլյուտինին Յ-ին.

4) 1-ին խմբի երիտրոցիտների մեջ ագլյուտինոգեններ չկան, բայց այդ խմբի շիճուկում կան յերկու ագլյուտինին՝ ա և Յ. 2-րդ խմբի երիտրոցիտները պարունակում են Ա ագլյուտինոգեն, իսկ այդ խմբի շիճուկում գտնվում է Յ ագլյուտինին. 3-րդ խմբի երիտրոցիտները պարունակում են Յ ագլյուտինոգեն, իսկ այդ խմբի շիճուկում գտնվում է ա ագլյուտինին. 4-րդ խմբի երիտրոցիտներում պարունակվում են Ա և Յ ագլյուտինոգեններ, իսկ շիճուկում ել վոչ մի ագլյուտինին գոլություն չունի։

Գործադրելով ագլյուտինոգենների և ագլյուտինինների թեորիան, կարելի յե տարբեր ձևով նշանակել խմբերը։

Ներկայումս զրականության մեջ ունենք արյան խմբերի հետևյալ յոթ տեսակի նշումները.



Աղյուսակ I

1	2	3	4	5	6	7
I	O	$\alpha\beta$	$O\alpha\beta$	O)	I( $\alpha\beta$ )	I(O $\alpha\beta$ )
II	A	$\beta$	$A\beta$	II(A)	II( $\beta$ )	II(A $\beta$ )
III	B	$\alpha$	$B\alpha$	III(B)	III( $\alpha$ )	III(B $\alpha$ )
IV	AB	$\circ$	$AB\circ$	IV(AB)	IV( $\circ$ )	IVAB $\circ$ ).

Այս նշումներից միանգամայն պարզվում է, վոր առաջին խումբը կարող է բոլորին ել արյուն տալ, վոչ մի խմբից արյուն չի ընդունում, բացի առաջին խմբից:

2-րդ խումբը կարող է արյուն տալ 2-րդ և 4-րդ խմբերին, իսկ ընդունում է 1-ին և 2-րդ խմբերից:

3-րդ խումբն արյուն է տալիս 3-րդ և 4-րդ խմբերին, իսկ ընդունում է 1-ին և 3-րդ խմբերից:

4-րդ խումբը վոչ մի խմբի, բացի իր 4-րդ խմբից, արյուն չի տալիս, բայց ընդունում է բոլոր խմբերից:

Առաջին խմբին պատկանող անհատները, վորոնք առանց վտանգի արյուն են տալիս բոլորին, կոչվում են ունիվերսալ դոնորներ. իսկ չորրորդ խմբի անհատները, վորոնք բոլորից ել առանց վտանգի կարող են արյուն ընդունել, կոչվում են ունիվերսալ բեցիպիլենտներ:

Նշանակելով ագլյուտինացիան  $+ \sim o\beta$ , իսկ ագլյուտինացիայի բացակայությունը  $- \sim o\beta$  կարելի լի խմբերի վերոհիշյալ բոլոր հատկությունները ձևակերպել այսպես (ըստ Jansky-ի):


Աղյուսակ II

Երկություններ		Շիճուկներ			
		I	II	III	IV
I . . . (O)		—	—	—	—
II . . . (A)		+	—	+	—
III . . . (B)		+	+	—	—
IV . . (AB)		+	+	+	—

Իսկ պրակտիկ աշխատանքների ընթացքում խմբերի առաջնահատկությունները հիշելու համար կարելի յէ հանձնարարել հետեւյալ գծանկարը. նկ. 1:

Նշանակելով 1-ին  
խումբը գծանկարի  
ստորին մասում, 4-րդ  
խումբը վերևում, իսկ  
2-րդ և 3-րդ խումբերը կողմնային մա-  
սերում, կարելի յէ  
դեպի վեր ընթացող  
սլաքներով արտահայ-  
տել խմբերի առանձ-  
նահատկությունները:  
Այս գծանկարից ել  
շատ պարզ կերպով  
յերեսում ե, վոր 1-ին  
խումբը բոլորին ել  
արյուն և տալիս, 4-րդ  
խումբը բոլորից ել  
ընդունում ե. 2-րդ  
խումբն արյուն ե ըն-  
դունում 1-ին և 2-րդ  
խմբերից, իսկ 3-րդ  
խումբն արյուն ե ըն-  
դունում 3-րդ և 1-ին խմբերից: Այսպիսով դժվար չե հիշել ա-  
րյան խմբերի առանձնահատկությունները:

Արյան խմբերը վորոշելու համար, ինչպես վերը նշել ելինք,  
դործ են ածում շտանդարտ շիճուկներ և շտանդարտ երիտրո-  
ցիտներ: Շտանդարտ շիճուկները պատրաստում են թե հեղուկ  
դրությամբ, թե փոշով և թե մատիտների ձևով: Ամենաըն-  
դունվածն ե շտանդարտ հեղուկ շիճուկը, վորը պահում են դա-  
նաղան մեծության հերմետիկ կերպով ծածկված սրվակների մեջ,  
մութ և ցածր աստիճանի ջերմություն ( $+4^{\circ} + 6^{\circ}$ ) ունեցող տե-  
ղերում: Շիճուկ պատրաստելու համար արյունը կարելի յէ վեր-  
ցընել դոնորներից, հիվանդներից կամ դիակներից, վորոնց ա-



Նկ. 1

րլան խումբը նախորոք վորոշված ե յեղել։ Շիճուկ՝ պատրաստելու համար միշտ պետք ե ոգտագործել այնպիսի արյուն, վորի պլազմայի տիտրը բարձր ե։ Ինչպես հայտնի յէ, արյան շիճուկը կարելի յէ նոսրացնել ինդիֆերենտ հեղուկներով՝ 1:2, 1:4, 1:8, 1:16, 1:32։ Այդ շիճուկը հետզհետե թուլանում, վերջ ի վերջո կորցնում ե իր ագլուտինացիոն հատկությունները։ Այդ ե պատճառը, վոր շտանդարտ շիճուկներ պատրաստելու համար չի կարելի արյան շիճուկը շատ նոսրացնել. ամենալավ ե վերցնել 1:2, 1:4, կամ 1:8 խառնուրդներ։

Շատ անհրաժեշտ ե շտանդարտ շիճուկներ պատրաստելու համար արյուն վերցնել չափազանց ստերիլ պայմաններում, միանգամայն մաքուր կերպով, վորպեսզի շիճուկը չվարակվի. հակառակ դեպքում պատրաստված շտանդարտ շիճուկը շուտով ցանք ե տալիս, վարակվում, պղտորվում ե և կորցնում ե հետզհետե իր հատկություններ։

Հիվանդանոցներում, հոսպիտալներում, ուազմական ժամերում նպատակահարմար ե շտանդարտ շիճուկներ պատրաստել ինքնուրույն կերպով 2-րդ և 3-րդ խմբերի արյունից։ Այդ պատճառով 2-րդ կամ 3-րդ խմբին պատկանող անհատներից ստերիլ կերպով արյունը բաց ե թողնվում ստերիլ անոթի մեջ. սկըզբնական շրջանում անոթն արյունով դնում են տերմոստատի մեջ (37—38°). և յերբ արյունը մակադրվում ե, դնում են սառցարանի մեջ, վորպեսզի ամբողջ շիճուկը բարձրանա մակարդված արյան մակերեսը։ Մի ուրիշ ստերիլ անոթի մեջ քիչ քլորոֆորմ են ածում, այն հաշվով, վորպեսզի ամեն 50,0 շիճուկին մի կաթիլ քլորոֆորմ ընկնի։ Ապա առաջին անոթից զգուշորեն ամբողջ շիճուկը տեղափոխում են 2-րդ անոթը, վորտեղ քլորոֆորմ ե դտնվում. շիճուկի մեջ դտնվող արյան կարմիր գնդիկները քայլքայվում են քլորոֆորմի ազդեցության շնորհիվ, և մնում ե մաքուր շիճուկը։ Այսուհետեւ այդ ամբողջ շիճուկը թափում են փոքր (1,0, 2,0, 5,0) ստերիլ սրվակների մեջ և հերմետիկ կերպով ծածկում են։ Այդ սրվակները հետո պահում են սառցարաններում +4°, +6° ջերմաստիճանում։ Շատ ցածր և շատ բարձր ջերմաստիճաններում շիճուկը չի կարելի պահել, վորովհետեւ նա չուտքայքայվում, փչանում ե։ Մինչև վեց ամիս կարելի յէ ոգտագործել պատրաստած շիճուկները, վորից հետո անհրաժեշտ ե

Յորից շիճուկներ պատրաստել։ Շտանդարտ շիճուկների պատրաստումը վերոհիշյալ ձևով չի սահմանափակվում։ գոյություն ունեն պատրաստման այլ ձևեր։ Մեր հանրապետական ֆիլիալը վաղուց ե, վոր ձեռնարկել ե շտանդարտ շիճուկների պատրաստմանը ինքնուրույն կերով, ոգտագործելով շիճուկների պատրաստման տարրեր յեղանակներ։ Հայաստանի արյան փոխներարկման բոլոր կայաններն ոգտագործում են մեր ֆիլիալի պատրաստած շիճուկները։ Լենինգրադի Արյան Փոխներարկման ինստիտուտը ոգտագործում է նաև շիճուկ-փոշի և շիճուկ-մատիտներ, վորոնք չափազանց հարմար են ուղմական պալմաններում։

Արյան խմբերը վորոշելու համար միանգամայն բավական ե սպավել 2-րդ և 3-րդ խմբերի շտանդարտ շիճուկներից, թեպետ և Լենինգրադի արյան Փոխներարկման ինստիտուտը միշտ ոգտագործում է նաև 1-ին խմբի շտանդարտ շիճուկ, մատնանըշելով այդ հանգամանքի կարեւրագույն նշանակությունը։ Մենք միշտ ոգտագործել ենք 2-րդ և 3-րդ խմբի շտանդարտ շիճուկներ, թեպետ և վերջին ժամանակներս ոգտագործում ենք նաև 1-ին խմբի շիճուկները։

Արյան խմբերը միանգամայն ճիշտ վորոշելու համար ոգտագործում են, բացի շտանդարտ շիճուկներից, նաև շտանդարտերիալոցիտներ։ Այդ մեթոդը խաչաձև (перекрестный) և կոչվում և գժրախտաբար իրականում քիչ ե ոգտագործվում, վորովիետև ավելի բարդ մեթոդ ե։

Բայց յեթե կան 2-րդ և 3-րդ խմբի ակտիվ շտանդարտ շիճուկներ և յեթե տիրապետում են արյան խմբերը վորոշելու տեխնիկային, իհարկե կարելի յե միանգամայն բավարարվել դրանով և ճիշտ կերպով վորոշել արյան խմբերը։

Այդ պատճառով առորյա գործնական աշխատանքի ընթացքում, ոգտագործելով 2-րդ և 3-րդ խմբերի շտանդարտ շիճուկները կարելի յե հետեւյալ կերպով վորոշել արյան խմբերը։ Վերցընում են առարկայական մաքուր ապակի, նրա ձախ մասում նըշանակում են II, իսկ աջում՝ III։ Ապա բանալով II խմբի շիճուկ պարունակող մի փոքրիկ սրվակ, իսկ մլուսը՝ III<sup>o</sup>խմբի, պիտեղակալով առարկայական ապակու ձախ մասում կաթեցնում են մի կաթիլ II խմբի շտանդարտ շիճուկ, իսկ միևնույն առարկայական ապակու աջ մասում մի կաթիլ III խմբի շիճուկ։ Հետո

ստերիլ կերպով, ընդունված ձևով, տվյալ անհատի մատից վերցնում են մի կաթիլ արյուն և խառնում են առարկայական ապակու վրա գտնվող մի կաթիլ II խմբի շտանդարտ շիճուկին, իսկ մյուս կաթիլ արյունը խառնում են նույն ապակու վրա գտնվող մի կաթիլ III խմբի շտանդարտ շիճուկի հետ: Արյան կաթիլները պետք եւ լինեն շիճուկների կաթիլներից բավականին փոքր:

Արյան կաթիլները շտանդարտ շիճուկների կաթիլների հետ խառնելուց և առարկայական ապակին քիչ թափահարելուց հետո սպասում են 2—5 րոպե: Այդ ժամանակամիջոցում կարող են տեղի ունենալ հետևյալ կոմբինացիաները. յեթե արյան կաթիլները և II ու III խմբի շտանդարտ շիճուկների կաթիլների խառնուրդները մնացել են անփոփոխ, այսինքն առարկայական ապակու թե ձախ և թե աջ մասում ազլյուտինացիա տեղի չի ունեցել, ուրեմն տվյալ անհատի երիտրոցիտները վոչ մի շիճուկով ազլյուտինացիայի չեն յենթարկվում, անհատը պատկանում է առաջին խմբին (ունիվերսալ դոնոր) նկ. 2 ա:

Յեթե առարկայական ապակու ձախ և աջ մասերում գտնվող արյան և շիճուկների խառնուրդները փոփոխվել, պարզվել և տվել են երիտրոցիտների կուտակումներ—վաթիլներ, նման դեպքում միանգամայն պարզ ե, վոր տվյալ անհատի երիտրոցիտները շտանդարտ շիճուկների հետ ազլյուտինացիա յենատալիս: Ուրեմն անհատը պատկանում է IV խմբին (նկ. 2 գ.): Յեթե առարկայական ապակու ձախ մասում արյունը մնացել է անփոփոխ, իսկ աջ մասում արյունն ազլյուտինացիա յե տվել, ապա այս դեպքում հետազոտվող անհատը պատկանում է II խմբին, վորովհետեւ II խմբի շտանդարտ շիճուկը ազլյուտինացիա չի յենթարկել երիտրոցիտները (նկ. 2 ը): Իսկ յեթե ազլյուտինացիան տեղի չե ունենում առարկայական ապակու ձախ մասում (2-րդ խմբի շտանդարտ շիճուկի հետ), բայց աջ մասում արյունը մնում և անփոփոխ, հետազոտվող արյունը պատկանում է 3-րդ խմբին (նկ. 2 դ.):

Այսպիսով միանգամայն հնարավոր եւ հեշտությամբ վորոշել արյան խմբերը, ոգտագործելով միայն 2-րդ և 3-րդ խմբերի շտանդարտ շիճուկները: Բայց ավելի ճիշտ վորոշելու և վտանգավոր սխալներից խուսափելու համար շատ հեղինակներ խորհուրդ են տալիս բացի շտանդարտ շիճուկներից ոգտվել նաև շտանդարտ երիտրոցիտներից: Որինակ, յեթե շտանդարտ շիճուկներով մենք վորոշել ենք, վոր տվյալ անհատը պատկանում է

2-րդ խմբին, ուրեմն և տվյալ անհատի արյան շիճուկը չպետք է ագլուտինացիայի լենթարկի 2-րդ խմբին պատկանող շտանդարտ երիտրոցիտները:

Ինչպես վերևում նշել ենք, Լենինգրադի Արյան Փոխներարկման ինստիտուտը խորհուրդ ե տալիս ոգտվել բացի 2-րդ և 3-րդ խմբերի շիճուկներից նաև 1-ին խմբի շտանդարտ շիճուկից, վորը ծառայում է վորպես կոնտրոլ: Ի հարկե, յեթե պայմանները ներում են, ավելի լավ ե խմբերը վորոշելու համար ոգտագործել նաև 1-ին խմբի շտանդարտ շիճուկը, այսինքն ոգտվել I, II և III (O, A,B) խմբերի շտանդարտ շիճուկներից: Նման դեպքերում խմբերը վորոշիլու պայմանները և հետեւանքները մնում են միևնույնը, այն տարբերությամբ միայն, վոր I (O) խմբի շիճուկը, բացի իր խմբի երիտրոցիտներից, մնացած բոլոր խմբերի երիտրոցիտներին ագլուտինացիայի յե լենթարկում: Ուրեմն, յեթե հետազոտվող անհատի արյունը 1-ին (O) խմբին ե պատկանում, ապա առարկայական ապակու վրա վոչ մի տեղ ել ագլուտինացիա չի առաջանում (տես նկ. 3 ա):

Յեթե հետազոտվող արյունը 4-րդ (AB) խմբին ե պատկանում, նման դեպքերում ապակու վրա ամեն տեղ ել ագլուտի-

### Ազլյուտինացիայի ռեակցիան

Ծրճ.


Ծրճ.




ԵՐԻՏՐՈՑԻՏՆԵՐ Օ ԽՄԲԻ



ԵՐԻՏՐՈՑԻՏՆԵՐ Ա ԽՄԲԻ



ԵՐԻՏՐՈՑԻՏՆԵՐ Բ ԽՄԲԻ



ԵՐԻՏՐՈՑԻՏՆԵՐ ԱԲ ԽՄԲԻ

Նկար 2. ա, բ, գ, դ:

Նացիս ե ստացվում (նկ. 3-րդ): Արյունը 2-րդ (A) խմբին և պատկանում, միայն 2-րդ (A) խմբի շիճուկի հետ ագլուտինացիա չի տալիս; իսկ 1-ին (O) և 3-րդ (B) խմբերի հետ ագլու-

### Ազլյուտինացիայի ռեակցիան

ՇԻՃ.


ՇԻՃ.

ՇԻՃ.


$O\alpha\beta$

$A\beta$


$B\alpha$




ԵՐԻՏՐՈՑԻՏՆԵՐ 0 ԽՄԲԻ



ԵՐԻՏՐՈՑԻՏՆԵՐ II (A) ԽՄԲԻ



ԵՐԻՏՐՈՑԻՏՆԵՐ III B ԽՄԲԻ



ԵՐԻՏՐՈՑԻՏՆԵՐ IV AB ԽՄԲԻ

Նկար 3. ա. թ. թ, դ,

տինացիա տալիս ե (նկ. 3 թ): Արյունը 3-րդ (B) խմբին և պատկանում, միայն 3-րդ (B) խմբի շիճուկի հետ ագլուտինացիա

շի տալիս, իսկ 1-ին (Օ) և 2-րդ (Ա) շիճուկների հետ ազլյուտինացիա յե տալիս (նկ. 3 գ): Բայց չնայած այդ բոլոր նախազգուշացումներին, այնուամենայնիվ արյան խմբերը վորոշելիս սխալներ են պատահում: Իհարկե, վորքան ավելի մեծ փորձառություն ե ունենում հետազոտող անձը, այնքան ավելի քիչ են լինում սխալները:

Զափաղանց կարեոր ե տարրերել այսպես կոչված կեղծ ագլյուտինացիան իսկական ազլյուտինացիալից: Կեղծ ազլյուտինացիալի ժամանակ երիտրոցիտների կուտակումներից ստացվում են շատ փոքրիկ հատիկներ, այսպես կոչված «դրամալին սլուներ»: Քիչ թափահարելուց կամ ֆիզիոլոգիական լուծույթ ավելացնելուց հետո այդ «դրամալին սլուները» նորից անհետանում են: Միկրոսկոպի տակ - «դրամալին սլուներ» կազմող երիտրոցիտների վորոշ մասը պարզ յերևում է, մինչդեռ իսկական ազլյուտինացիալի ժամանակ երիտրոցիտները բոլորովին կորցնում են իրենց տեսքն ու ձեր: Յերբեմն արյան խմբերը ցուրտ միջավայրում վորոշելիս նմանապես ազլյուտինացիա լի ստացվում, վորը շատ հեղինակներ անվանում են սառը ազլյուտինացիա. Վոճանք ել այդ յերևույթը պանազլյուտինացիա յեն անվանում: Պանազլյուտինացիա կամ սառը ազլյուտինացիան առաջանում ե ձմեռ ժամանակ, յերբ արյան խմբերը վորոշվում են սենյակում, 0—5° ջերմաստիճանում: Սառը ազլյուտինացիալի ժամանակ ել երիտրոցիտների կուտակումները շատ փոքրիկ, բայց աչքով տեսանելի հատիկներ են կազմում, վորոնք քիչ տաքացնելուց հետո հետզհետե ավելի յեն փոքրանում և ապա իսպառ վերանում:

Արյան խմբերը վորոշելիս, սխալներից խուսափելու համար անհրաժեշտ ե նաև ուշադրություն դարձնել երիտրոցիտների նստվածքի վրա (երիտրոցիտների սեղիմենտացիա): Այդ յերեւվույթը նկատվում ե զլիսավորապես այն ժամանակ, յերբ արյան կաթիւը լավ չի խառնվում շտանդարտ շիճուկի հետ և բացի դրանից առարկայական ապակին չեն թափահարում:

Յերբեմն արյունն ել կարող ե չորանալ առարկայական ապակու վրա և տեղիք տալ սխալ վորոշումների: Այդ ե պատճառը, վոր արյան խմբերը վորոշելիս, արյունը և շտանդարտ շիճուկը խառնելուց հետո, հինգ րոպեյից ավելի չի կարելի սպասել. իս-

կական ագլուտինացիան միշտ տեղի յեւ ունենում առաջին յերկու-յերեք բոպեների ընթացքում:

Պետք եւ շատ մեծ զգուշությամբ վորոշել արյան խմբերը մասսայական աշխատանքի ընթացքում, յերբ անհրաժեշտ եւ լինում մի որում հարյուրավոր խմբեր վորոշել. նման դեպքերում պետք եւ լինի առանձին բրիգադ, վորի անդամները պետք եւ աշխատանքի լիակատար բաժանում կատարեն: Մեր Փիլիալի աշխատակիցները այդպիսի աշխատանքներ կատարել են թե 1911, 1912 թ. զինակոչիկների, թե ուսանողության և թե բնակչության մեջ: Նման մասսայական աշխատանքների շնորհիվ մեր Փիլիալի տրամադրության տակ ներկայումս կա արյան խմբերը վորոշելու մոտ 20,000 որինակ:

Բացի արյան փոխներարկման բնագավառից արյան խմբերի ուսուցումը լայն չափով ոգտագործվում է վերականգնող (պլաստիկ) վիրարուժության և դատական բժշկականության մեջ: Բազմաթիվ փորձերը ցույց են տվել, վոր հոմոլաստիկալի ընթացքում հիվանդին պատվաստած հյուսվածքի կտորը հաճախ ապրում է իր նոր տեղում այն դեպքերում, յերբ հյուսվածքի հիշալ կտորը վերցվում է համատեղի արյուն ունեցող դոնորից: Դատական բժշկականությունն ոգտագործվում է արյան խմբերը կասկածելի արյան բծերի (լաքաների) պատկանելիությունը վորոշելիս կամ ել հաճախակի կրկնվող և ալիմենտներին վերաբերող դատական գործերում: Արյան խմբերը շատ պատվավոր տեղ են գրավում նաև անտրոպոլոգիայում: Անտրոպոլոգներն ոգտագործում են արյան խմբերի ուսուցումը ցեղերի ծագման, ժառանգության և այլ հարցերի լուծման բնագավառում:

## ԴՈՆՈՐՆԵՐ ՅԵՎ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԼԵՄԸ

Դոնոր (donor) եւ կոչվում այն անհատը, վորն իր հոժար կամքով \*պարբերաբար տալիս է իր արյունը: Առաջին անգամ այդ գործը կազմակերպվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում մոտ 25—30 տարի առաջ: Հետագայում արդեն սկսել են ոգտվել դոնորների արյունից Յելրոպայի համարյա բուլոր յերկրներում: Ներկայումս Ամերիկայում գոյություն ունի դոնորների արհեստակցական միություն: Դոնորները կարող են

տալ իրենց արյունը մարդասիրական զգացմունքներից դրդված, ինչպես որինակ Անգլիայում. այնտեղ ամեն մի դոնոր 10 անգամ ձրի արյուն տալուց հետո ստանում և Լանդշտեյների շքանըշանը: Մնացած լոլոր յերկրներում, ինչպես Ամերիկայում դոնորներն իրենց արյան համար ստանում են վորոշ վարձառություն:

Պետք ե ասել, վոր բուրժուական պետություններում դոնորի հարցով, նրա առողջությամբ, նրա կարիքներով և շահերով համարյա չեն հետաքրքրվում: Բացի վորոշ վարձատրությունից, դոնորն այլևս վոչինչ չի ստանում և հետաքրքրում ե արյուն վերցնողներին միայն այն մոմենտին, յերբ նա տալիս ե իր արյունը. անպայման նա շահագործվողի դերում ե գտնվում իմպերիալիստական յերկրներում: Մեր Միության մեջ դոնորության պրոբլեմը դրված ե գիտական հողի վրա: Այդ դործը լավ ուսումնասիրվում և կազմակերպվում ե:

Միանգամայն ճիշտ ե, վոր արյան փոխներարկման գործի հաջողությունը առավելագույն չափով կախված ե դոնորության հարցի դրական լուծումից: Զկա դոնոր, ուրեմն չկա և արյուն, հետեապես և չի ել կատարվում արյան փոխներարկում: Դեռևս մեր Միության վորոշ տեղերում բուժիմնարկներն անգամ շատ անհրաժեշտ դեպքերում հնարավորություն չունեն արյան փոխներարկում կատարել, վորովհետեւ ձեռքի տակ դոնորներ չունեն: Այդ ե պատճառը, վոր մեր Միության առողջապահական գիտական դերագույն մարմիններն առաջին հերթեն միանգամայն արդարացի կերպով ուշադրություն են դարձնում դոնորի լիակատար ուսումնասիրության և դոնորների պրոբլեմի հաջող լուծման վրա: Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում արդեն կազմակերպված են դոնորական կադրեր և մանրակրկիտ կերպով ուսումնասիրվում ե ամեն մի դոնոր:

Դոնորներ ընտրելիս պետք ե լինել չափազանց զգույշ: Դոնորը պետք ե լինի միանգամայն առողջ և պարբերաբար արյուն տալը նրա առողջությանը վոչ մի մնաս չի հասցնի: Վերը մենք նշեցինք, վոր դոնորի անձը բուրժուական յերկրներում արյուն վերցնող հիմնարկներին բոլորովին չի հետաքրքրում: Այլ ե մեր Միության մեջ: Մեզ մոտ աշխատում են կեն-

սագործել հետևյալ լողունդը. «Մաքսիմում ոգուտ հիվանդին եւ վոչ մի վնաս դռնորին»:

Եթ արտաքինով դռնորը պետք եւ լինի առողջ տեսքով, լավ կազմվածքով, 20—40 տարեկան հասակում. յերկու սեռից ել կարելի յեւ դռնորներ ընտրել: Տղամարդկանց և թե կանանց արյան մեջ վոչ մի տարբերություն դեռևս չի հայտնաբերված: Դռնորներ ընտրելիս ամենալուրջ ուշադրությունը դարձնում են գլխավորապես յերեք վարակիչ հիվանդությունների վրա, այն ե՞ւ սիֆիլիսի, տուրերկուլյոզի և մալարիայի վրա: Սրանով չի սահմանափակվում դռնորի ուսումնասիրությունը. ճիշտն այն է, վոր դռնորը առհասարակ վոչ մի հիվանդություն չպետք եւ ունենա, գլխավորապես արյան վարակիչ հիվանդություններ:

Սիֆիլիսի նկատմամբ՝ լուրջ ուշադրություն են դարձնում դռնորի արտաքին ծածկույթների, ավշային գեղձերի և ներքին որգանների մանրամասն հետազոտության վրա: Աչքի առաջ են ունենում նաև դռնորի կյանքի պատմությունը, նրա անամնեղը: Բայց ամենաեյական նշանակությունն այդ հետազոտման ընթացքում ունի արյան սերոլոգիական սպեցիֆիկ ուսակցիաների ուսումնասիրությունը: Այդ ուղղությամբ կատարում են Wasserman-ի, Kahn-ի, Wern-ի և այլ ուսակցիաներ: Յեթե բոլոր տվյալները հավաքելուց հետո սիֆիլիսի վերաբերյալ անզամշատ չնշին կասկած եւ մնում, միևնույն եւ վոչ մի դեպքում չի կարելի հետազոտվող անհատին ընտրել վորակես դռնոր: Կարիք չկա ասելու, վոր նման դեպքերում լուրջ ուշադրություն են դարձնում այսպես կոչված մետասիֆիլիտիկ յերեսույթների և սիֆիլիսից առաջացած այլ բարդությունների վրա: Ինքը դռնորը նույնպես պետք եւ քաղաքացիական ազնվություն ունենա և իրազեկ դարձնի իր ունեցած հիվանդությունների մասին:

Շատ ծանր հարց եւ նաև այն, թե արդյոք տառապում ե կամ տառապել ե դռնորը մալարիայով, թե՞ վոչ. միանգամայն դժվար ե վորոշել լատենտ (գաղտնի) մալարիայի առկայությունը: Այդ հարցը առավելապես դժվարանում ե տրոպիկական և սուբտրոպիկ յերկրների համար, վորտեղ մալարիան ենդեմիկ բնույթ ե կրում, և մեր Խորհրդային Հայաստանի համար գործը չափազանց դժվարանում ե այն խմաստով, վոր աղղարնակության համարյա 50<sup>0</sup>/₀-ը տառապում ե մալարիայով: Այնուամե-

նայնիվ ոգտվելով զոնորի անամնեղի, ընդհանուր հետազոտության, արյան մանրամասն հետազոտության տվյալներից կտրելի յե պարզել կամ ժխտել մալարիայի առկայությունը։ Հենինգը արյան Փոխներարկման ինստիտուտի աշխատակիցներ՝ Ակկերմանը և Թիլատովը հրատարակել են մի աշխատություն, վորից պարզվում է մալարիայի պարագիտների վիճակը կոնսերվացիայի յենթարկած արյան մեջ։ Վերոհիշյալ հեղինակներն իրոք ապացուցեցին, վոր մալարիայի պարագիտները կոնսերվացիայի յենթարկած արյան մեջ սկսած հինգերորդ որից բոլորովին քայլայվում, վոչնչանում են։ այնպես վոր մալարիայով տառապող հիվանդների արյունը կարելի յե կոնսերվացիայի յենթարկել և հինգ որից կամ ավելի յերկար ժամանակից հետփոխներարկում կատարել առանց վորեն վտանգի։ Մեր հոնձնաբարությամբ Յերեատնի Տրոպիկան ինստիտուտում այդ հարցով զբաղվեց բժիշկ Ա. Բ. Սարգսյանը, վորը հաստատեց վերոհիշյալ հեղինակների տվյալները և հայտնաբերեց նոր, մեծ զործնական նշանակություն ունեցող տվյալներ։ Այսպիսով պետք է ասել, վոր տրոպիկական յերկրներում արյան կոնսերվացիան բոլորովին թուլացնում կամ բոլորովին անհետացնում է մալարիայի վտանգը արյան փոխներարկման ժամանակը։

Դոնորին քննելիս լուրջ ուշադրություն է դարձվում նույն թոքերի և այլ որդանների տուրերկուլյոզի վրա։ Դոնորը չպետք է ունենա մաշկի և զեղձերի տուրերկուլյոզ, մաշկը և լորձաթաղանթները պետք է լինեն միանգամայն մաքուր, վոչ մի խոց կամ խրվակ (СВИЩ) չպետք է լինի։ Վոչ մի տեղ զեղձերը չպետք է շոշափվեն։ Գլխավորապես պետք է խուստիել թոքերի ակտիվ տուրերկուլյոզ ունեցող հիվանդներից։

Դոնորը պետք է ազատ լինի սրտի տրատներից և առհասարակ սիրտանոթային համակարգի զանազան հիվանդություններից։ Նրա ներվալյին համակարգը պետք է լինի կանոնավոր դրության մեջ և գանգատներ չպետք է լինեն զգայաբանների նկատմամբ։ Բոլորովին կարիք չկա նշել և այլ հիվանդություններ։ Կարճ տասձ՝ դոնորը պետք է լինի առողջ և ունենա արյան նորմալ բազագրություն թե մորֆոլոգիայի և թե քիմիական կառուցվածքի նկատմամբ։

Դոնորը պետք է ունենա լավ, ցալտուն կերպով արտա-

հայտված յերակներ։ Գլխավորապես ուշադրություն են դարձնում արմունկացին ծալքի շրջանում գտնվող (vena mediana cubiti) յերակների վրա։ Բազուկի վրա թեթև ճնշում գործադրելիս (սեղմանով), վերռիշցալ յերակները պետք է լավ ունչեն, փքվեն, մակերեսային դրություն ընդունեն, վորպեսզի հնարավոր լինի ասեղը հեշտությամբ հասցնել նրանց լուսանցքը։ Այլապես, անգամ առողջ դոնորը պիտանի չի լինի։ Նիհար տղամարդիկ լավ արտահայտված յերակներ են ունենում, իսկ կանայք՝ ընդհակառակը։

Պարբերաբար, ամեն մեկ, յերկու կամ յերեք ամսից հետո դոնորները նորից պետք են քննության յենթարկվեն տարբեր մասնագետ բժիշկների մոտ; ըստ վորում նրանց վերաբերող բուլոր տվյալները պետք են գրի առնվեն հատուկ, միայն դոնորներին վերաբերող դրաբերում։ Ամեն մի դոնոր պետք է ունենաիր մատյանը։

Ամեն կերպ պետք է աշխատել, վոր վոչ մի մաս չհասնի դոնորին։ Չի կարելի անկանոն կերպով արյուն վերցնել այլ պետք են վորոշ, սահմանված չափերով վերցնել արյունը, վորպեսզի դոնորը տվյալ ժամանակամիջոցում, առանց որդանիղմի վորեւ խանգարումների, հնարավորություն ունենա վերականգնել արյան կորուստը։ Որինակ 500,0 արյան կորուստը վերականգնում են մոտավորապես մի ամսում։ ուրեմն ամեն մի դոնորից ամիսը մի անգամ կարելի յե վերցնել 500,0 արյուն և վոչ ավելի։ Ամիսը յերկու անգամ կարելի յե վերցնել 200—250,0 արյուն։ 700—800,0 արյուն վերցնելուց հետո պետք են հանգիստ տալ դոնորին վոչ պակաս  $1\frac{1}{2}$  ամսից։ Ամեն կերպ պետք են խուսափել 1000,0 կամ ել ավելի քանակով արյուն վերցնելուց, վորովհետեւ արյան այդպիսի մեծ կորուստները շատ դանդաղ են վերականգնում։ Բացի դրանից վոչ միշտ կարիք են լինում վերցնել մի լիտր արյուն, վորը մաքսիմալ դոզա յե համարվում։ Հաճախ վերցնում են 500,0 արյուն, վորը պետք են համարել միշտ դոզա, 200—250,0 արյունը փոքր դոզա յե։

Դոնորներին պետք են դնել բարենպաստ պայմանների մեջ, վորպեսզի նրանք հնարավորություն ունենան ժամանակին վերականգնել արյան կորուստը։ Առաջին հերթին նրանք պարտավոր են վարել հանգիստ, միանման, կանոնավոր կլանք։ Նրան-

ցից պահանջվում ե մաշտիմալ չափով մարմնի մաքրություն պահպանել՝ ամեն տեսակետից: Նրանք պետք ե ժամանակին պառկեն, ժամանակին զարթնեն, անքուն գիշերներ չանցկացնեն: Չպետք ե նրանց աշխատանքով ծանրաբեռնել, վորպեսզի նրանք հոգնածություն չզգան: Շատ լուրջ հարց ե նաև դոնորների սննդի հարցը: Համարյա ամենուրեք և գլխավորապես մեր Միության բոլոր կենտրոններում դոնորները ստանում են բացի դրամական վարձատրությունից նաև ուժեղացրած սնունդ: Ստացած փողը և սննդարաժինը դոնորը պարտավոր ե ծախսել լավ սննդի համար. նա պետք ե լավ կերակրվի, մեծ քանակությամբ կալորիաներ ընդունի, վորպեսզի նրա արյան կորուստը կարծ ժամանակամիջոցում և առանց վորեն բարդությունների ժամանակին վերականգնի: Տարրեր վայրերում դոնորները տարրեր տեսակի սնունդ են ստանում: Մուկվայի արյան Փոխներարկման ինստիտուտի Հայաստանի ֆիլիալն ունի 25 դոնոր, վորոնք պատկանում են տարրեր խմբերի: Մեր ամեն մի դոնորն իր տված արյան համար ստանում ե հետևյալ վարձատրությունը՝ 500,0 արյան վարձը՝ 175 ռուբլի և բացի դրանից՝ ամսական սննդարաժին: Իսկ նրա ամսական սննդարաժինը բաղկացած եր հետևյալ մթերքներից՝

Սպիտակ հաց . . . . .	18 կ.
Կարագ . . . . .	2 կ.
Շաքար . . . . .	3 կ.
Զու . . . . .	30 հատ
Կաթ . . . . .	15 լիտր:

Մեր դոնորի ստացած կալորիաների թիվը 4000—4500-ից պակաս չե: Ներկայումս մեր դոնորներն իրենց տված արյան համար ստանում են միայն դրամական վարձատրություն, բայց ավելացրած գներով (1,0 արյունն արժե 50 կոպեկ): Այսպիսով պետական բուժհիմնարկները և դոնորները մտնում են փոխադարձ համաձայնության մեջ, հաճախ պայմանագիր են կնքում իրար հետ և ամեն մի կողմը պարտավորվում ե ճշտությամբ կատարել իր ստանձնած պարտավորությունները: Յեթե վորեն կողմը խախտում է պայմանագիրը, հակառակ կողմը կարող է դատական հայց հարուցել:

Դոնորները պարտավոր են անմիջապես գալ բուժհիմնարկը

կամ վորեե այլ տեղ, յեթե նրանց համապատասխան տնձնագուրություններ հրավիրում են արյուն տալու։ Ազատվում ե դռնորր այդ պարտականությունից միայն հիվանդության դեպքերում։ Բուժհիմնարկները պարտավորվում են հսկել և վնաս չհասցնել դռնորների առողջությանը, բացի այդ, բուժհիմնարկները պարտավոր են դռնորներին ժամանակին տալ նրանց հասանելիք դրամը և սնունդը։ Դոնորներն ընդունում են զլիսավորապես ազգարնակության գիտակից խավերից, այնպես վոր թյուրիմացություններ դռնորների և բուժհիմնարկների միջև շատ քիչ են պատահում։ Դոնորները մեր Միության մեջ լինում են ուսանողներից, բուժհիմնարկների ծառայողներից, բանվորներից և այլ աշխատավորներից։ Մեր Փիլիալի 25 դռնորները ուսանողներ և բուժհիմնարկի ծառայողներ են։

Դոնորությունը բոլորովին անվտանգ և որդանիզմի վրա չի ազդում։ Մոսկվայի արյան Փոխներարկման ինստիտուտում կան դռնորներ, վորոնք 1926 թ. սկսած շարունակ արյուն են տալիս և ներկայումս ել շատ լավ են իրենց զգում և կատարում են իրենց բոլոր ուղղակի պարտականությունները։ Մեր Փիլիալի դռնորներից կան այնպիսիները, վորոնք 1 տ. 8 ամսվա ընթացքում տվել են մոտ 10 լիտր արյուն և վոչ մի դանդառ չունեն։

Հավանական է, վոր դռնորների հեմոսպոետիկ որդաններում կատարվում են վորոշ փոփոխություններ, բայց այդ փոփոխություններն այնքան են աննշան, վոր բոլորովին աչքի չեն ընկնում և ինարկե զործնական նշանակություն չունեն։ Այնուամենայնիվ զգուշությամբ վերաբերվելով զեղի դռնորների շահերը, կարելի յե յերկար տարիների ընթացքում ուղարկել նրանց արյունից, առանց վորեե վնաս պատճառելու նրանց որդանիզմին։

Յելինելով վերոհիշյալից, Մոսկվայի Արյան Փոխներարկման կենտրոնական ինստիտուտը մի հիմնավորված բանաձև առաջարկեց Միուրենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին դռնորության զործը մեր Միության սահմաններում բեղլամենտացիայի յենթարկելու և նրան իրավաբանական ձևակերպում տալու համար։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեն արդեն վորոշում և հա-


նել դուռը ների մասին։ Համաձայն այդ վորոշման գանուքները հավատարեցվում են ապահովագրածներին և վայելում են նըստց քոլոր արտանությունները։ Դօնորը միենայն ժամանակ կարող է պաշտանավարել վորեա այլ հիմնարկում։ Արյուն տալուց կարող է մի կամ յերկու արով, յեթե բժիշկը անհրաժեշտ է պահում, ազատվել աշխատանքից։ Յեթե բուժհիմնարկը հրավիրում է գոնուրին արյուն տալու, ապա այն հիմնարկի պետք վորածով արց յաջ դուռը պաշտանավարում է, իրավանք չունի արգելք հանդիսանալու դուռը կատարելի իր պարագաներուն։ Հրավիրության դեպքում դուռը առանում է յերկարակ արձակարգ առողջությանը վերականգնելու համար։ Հաշմանդամության դեպքում դուռը ստանում է կենսաթոշակ։ Իսկ դուռի մահվան դեպքում կենսաթոշակ են ստանում դուռի ընտանիքի անդամները։

## ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Արյունը մեկից մյուսին կարելի յե վերիններարկել կամ անմիջականորեն, ուղղակի կերպով, կամ ել անուղղակի յեզանակով։ Ուղղակի կամ անմիջական յեզանակ ասելով մենք պետք և հասկանանք այն, վոր դուռի (արյուն ավազի) անփոփոխ արյունն անցնում ե անմիջապես ընդունովի (recipient-ի) յերակները՝ այդ յերեւ անհատների անոթային համակարգությանների միջև հազարդակցության ստեղծելու միջոցավ։ Ինչպես պատմական մասում նշեցինք, մեր դարի սկզբներին ամերիկացի խիրուրգ Cille-ն անսթացին կարերով դուռի զարկերակը միացնում եր ընդունովի՝ այսինքն հիվանդի յերակի ներ, և արյունը բարձր ճնշման ազդեցությամբ անցնում եր դուռից բեցիպիցներին։ Բայց այս ձեր ներկայումս վաշ մի անգ չի կիրառվում, վորովհետեւ տեխնիկապես չափազանց դժվար և և չի կարելի իմանալ հաստատապես, թե ավյալ ժամանակամիջոցում վորքան արյուն անցավ հիվանդի յերակները։ Բայց դրանից, այս ձեր չափազանց վառնուպավոր և դանուրների համար, վորովհետեւ նրանք հեշտությամբ կարող են վարակվել հիվանդներից։

Ներկայումս անմիջական կամ ուղղակի արյան փոխներարկման համար դուռի և բեցիպիցների յերակները միացնում

են խողովակներով, վորոնց ծայրերում ասեղներ կան: Այդ խողովակներն ասեղների հետ միասին կազմում են տարրեր ապարատների, զվարապես հատուկ մեծ շպրիցների մասերը: Արյան անմիջական փոխներարկման համար առաջարկված ապարատների թիվը չափաղանց շատ եւ և ներկայումս ել շարունակ նորերն են առաջարկվում: Արդեն այդ հանգամանքը վորոշ չափով ապացուցում ե անմիջական, ուղղակի մեթոդի անկարողությունը, վորովհետեւ միանգամայն պարզ կառուցվածքը ունեցող ապարատ մինչև հիմա ել գոյություն չունի: Յեղած ապարատներից ամենագործածականներն են Ոլեկերի և Ժուբե (Joubé)



Նկար 4. Յուբեի ապարատը

հատուկ շպրիցները: Այդ ապարատների կառուցվածքի ընդհանուր գիծն այն ե, վոր շպրիցի յերկու խողովակներից (իրենց ասեղներով) մեկը միանում ե դոնորի յերակի հետ, մյուսը recipient-ի յերակի հետ: Հատուկ ծորաններով կանոնավորում են արյան հոսանքն այնպես, վոր դոնորի յերակից արյունը մըտնում ե շպրիցի մեջ, և հետո միևնույն շպրիցով մտնում ե recipient-ի յերակները: Կարիք չկա առանձնապես կանգ առնել այդ ապարատների մանրամասն նկարագրության վրա, վորովհետեւ այդ ապարատները մեր Միության սահմաններում շատ

քիչ են գործածվում։ Ամենուրեք դիմում են տեխնիկապես հեշտ, բոլոր բժիշկների համար ավելի մատչելի և դոնորների համար անվտանգ անուղղակի կամ վոչ անմիջական (посредственное переливание) արյան փոխներարկման յեղանակին։ Արյան Փոխներարկման կենտրոնական ինստիտուտը վաղուց արդեն անցել է այդ մեթոդին և միանգամայն արդարացի կերպով հանձնարարում ե գործադրել միայն վոչ անմիջական մեթոդը։

Մինչև 1934 թ. կենտրոնական ինստիտուտը կատարել ե մոտ 3000 անուղղակի (ցիտրատային) արյան փոխներարկումներ։ Վիրաբուժների համամիութենական 22-րդ համագումարը և Ռւկրայնայի վիրաբուժների 4-րդ համագումարը նույնպես յեկել են այն յեղակացության, վոր անուղղակի (ցիտրատային) արյան փոխներարկումը մեք միության սահմաններում պետք ե լինի ամենաընդունված ձևը։

Պետք ե ասել, վոր անշուշտ այդ մեթոդը լայն տարածման մեծ ապագա ունի և այդ տեսակետից մեծ դեր կարող ե խաղալ յերկրի պաշտպանության գործում։ Մեր ֆիլիալի փորձը միանգամայն հաստատում ե այն կարծիքը, վոր ցիտրատային (անուղղակի) արյան փոխներարկումը պետք ե լինի ամենաընդունված ձևը։ Այս ձևով կատարված արյան փոխներարկումը այնքան ե հեշտացնում տրանսֆուզիայի տեխնիկան, վոր արյան և ֆիզիոլոգիական լուծույթի տրանսֆուզիաները համարյա վոչնչով չեն տարբերվում իրարից։ Մեր ֆիլիալի և իր յենթարաժինների մինչև որս կատարած 450 արյան ցիտրատային փոխներարկումների ընթացքում առանձին դժվարություններ և բարդություններ չեն նկատվել։ Ցիտրատային արյան փոխներարկման ամենասպիտակոր առավելությունն այն ե, վոր իրոք արյան փոխներարկման տեխնիկան չափազանց դյուրանում և մատչելի յեղանում նաև վոչ վիրաբուժ բժիշկների համար։ Այդպիսով, բուժման այդ սքանչելի մեթոդը լայն չափերով տարածվելու հարավորություններ ե ստանում։

Ցիտրատային արյան հանդեպ անփոփոխ արյունը (цельная кровь) համարյա վոչ մի աչքի ընկնող առավելություն չունի։

Ցիտրատային արյան փոխներարկումներից հետո տեղի ունեցող ջերմության բարձրացումը, դողը և այլ յերնույթները

շատերը կապում եյին ցիտրատի հետ, բայց հետո պարզվեց, վոր անփոփոխ արյան փոխներարկումները (ուղղակի փոխներարկումները) տեղի յեն տալիս միևնույն ռեակցիային։ Բայ կավայի և լիբեզի տվյալների, անփոփոխ (ուղղակի միջոց) արյան փոխներարկումները տվել են  $4-5^{\circ}/_0$ -ով ռեակցիաներ, մինչդեռ ցիտրատային արյան փոխներարկումները տվել են  $1,7^{\circ}/_0$ -ով ռեակցիաներ։ Կոնսերվացիայի յենթարկված արյան փոխներարկումներից հետո, ել ավելի քիչ ռեակցիաների դեպքեր են նկատվում։ Ինչ վերաբերում ե ցիտրատային արյան ներգործությանն որգանիզմի վրա, ապա պետք ե ասել, վոր կյանքը միանգամայն ապացուցել ե նրա մեծ արժանիքները։ Ահա այդ ե պատճառը, վոր անհրաժեշտ ենք համարում արյան անուղղակի փոխներարկման վրա կանգ առնել ավելի մանրամասնորեն։

Առաջին հերթին նպատակահարմար ե կանգ առնել անուղղակի տրանսֆուզիայի համար գործածվող ապարատների վրա։ Այդ բնագավառում գործածվող բոլոր ապարատները կարելի յերաժանել (դասավորել) հինգ հիմնական խմբերի։



Նկար 5. Բարինշտեյնի  
ապարատը

1. Առաջին խմբին պատկանում են հասարակ ձագարներն իրենց խողովակով և ասեղով, ինչպես որինակ Բարինշտեյնի, Դյուպուի-Դեֆրենելի, Պերսի-ի և այլ ապարատները. (նկար 5 և նկար 6):

2. Յերկրորդ խմբին պատկանում են այն ապարատները, վորոնք աշխատում են ճնշման տակ, որինակ Բորբովի ապարատը (նկար 7):

3. Յերրորդ խմբին պատկանում են հասարակ շպրեցները, որինակ՝ Janet-ի շպրիցը:

4. Չորրորդ խմբին պատկանում են այն ապարատները, վորոնք կառուցված են Եսմարխի ապարատի սկըրբունքների համաձայն։

5. Հինգերորդ խմբին պատկանում են այն բոլոր ապարատները. վորոնք նման են Բորբովի ապարատին, բայց հատակով


շջվում են դեպի վեր, վորից հետո արյունը ինքնահոսով անցնում է ըեցիպիյենտի լերակների մեջ։ Այս տիպի ապարատներն ունեն նաև հատուկ խողովակներ, վորոնց միջոցով կարելի է ոդմտցնել ապարատի մեջ և ճնշումը բարձրացնել արյան մակերեսի վրա, յեթե արյան հոսանքը շատ դանդաղ է (Դուբրովի ապարատը. Նկար 8):

Թե խաղաղ և թե գլխավորապես ուղղմական պայմաններում անհրաժեշտ է շատ ունենալ վերոհիշյալ ապարատներից, վորոնց պատրաստման պատվերները մեր գործարանները պարտավոր են ժամանակին կատարել։ Այս ուղղությամբ անհրաժեշտ ցուցմունքներ պետք են տան մասնագետ բժիշկները։

Ըսդհանուր առմամբ լավ ապարատներից պահանջվում է, վոր նրանք պատրաստված լինեն կայուն նյութից, լավ հականեխվեն, գործածությունից հետո լավ մաքրվեն, ունենան հասարակ կառուցվածք և լինեն եժան։ Ցանկալի լի, վոր մեր գործարանները պատրաստեն այդ պահանջներին բավարարող ապարատներ մեծ քանակությամբ։


Բոլորից ավելի հարմար են այն ապարատները, վորոնց մեջ ցիտրատալին արյունը ողի հետ քիչ շփում ունի, ողի միջոցով չի վարակվում, կամ արյունը նրանց մեջ չի մակարդվում։

Դոնորից արյուն վերցնելիս պետք է աշխատել, վոր արյունը առատ հոսանքով թափվի ապարատի մեջ և լավ խառնվի ցիտրատի լուծուլթի հետ, այլապես ալդակիսի արյունը հեշտու-



Նկար 6. Դյուպուի-Դեֆրենելի ապարատը

թիամբ մակարդվում ե: Հասկանալի չե, վոր մակարդված արյունը բոլորովին անպետք ե փոխներարկման համար, իսկ նրա փոքրիկ կտորները կարող են տեղիք տալ եմբոլիայի: Այդ ե պատճառը, վոր սկզբունքորեն սխալ պետք ե համարել այն ապարատների




Նկար 7. Բորբովի ապարատը:

կառուցվածքը, վորոնց արյան յելքի անցքը գտնվում է անոթի հատակին. Նման դեպքերում մակարդված արյան փոքրիկ կտորտանքները հեշտությամբ կարող են անցնել արյունատար խողովակի մեջ, այնտեղից ել recipient-ի յերակի մեջ: Սխալ պետք ե համարել նույնպես բաց անոթների կառուցվածքը, ինչպես որինակ ձագարների, վորովինետև արյունը նրանց մեջ հեշտությամբ կեղտոտվում ե: Արյան փոխներարկման համար անհարմար են նաև շպրիցները, վորոնք շուտ փչանում, կոտրվում են, կանոնավոր չեն աշխատում և վորոնց մեջ արյունն ավելի շուտ է մակարդվում:

Հենվելով մեր ֆիլիալի փորձի վրա և վորոշ չափով գրականության տվյալների վրա, պետք ե ասենք, վոր շատ հարմար ե Բորբովի ապարատը։ Արյան փոխներարկումն այս ապարատից կատարվում ե բավականին հեշտ կերպով, ինչպես հեշտ են կատարվում ֆիզիոլոգիական և այլ լուծույթների ներարկումները։

Բայց ներկայումս մեր Միության մեջ շատ մեծ գործածության մեջ ե և ընդունված ե վորպես շտանդարտային ապարատ Դուբրովի ապարատը։ Ինչպես վերը նշեցինք, այս ապարատը շատ նման է Բորբովի ապարատին, բայց աշխատանքի ժամանակ շըրջվում ե հատակով դեպի վեր։ Recipient-ի համար նախատեսված ուետինի խողովակը (իր ասեղով) միացվում ե Դուբրովի ապարատի կարճ ապակե խողովակին, մինչդեռ յերկար ապակե խողովակին կարիք յեղած դեպքերում միացվում ե Ռիդչարդսոնի բալոնը՝ ապարատի մեջ ոդ մտցնելու համար։ Մենք գերադասում ենք գործադրել Բորբովի ապարատը, վորի գործածության հետ լավ ծանոթ ե անդամ բժշկական միջին անձնակազմը։ Իսկ ուզական պայմաններում անհրաժեշտ ե ոգտվել Դուբրովի ապարատից, վորը հասարակ կառուցվածք ունի, և այդպիսին ամեն մի բժիշկ կարող ե սարքել յեղած շերից և խողովակներից։ Այս ապարատի առավելությունն այն ե հաճարվում, վոր ապարատը շրջվելիս արյունը ֆիզիկական որենքի համաձայն, իր ծանրության շնորհիվ ինքնահոսով անցնում ե ընդունողի յերակների մեջ։ միայն հազվագյուտ դեպքերում են ստիպված լինում դիմել Ռիդչարդ-




Նկար 8. Դուբրովի ապարատը.

Մենք գերադասում ենք գործադրել Բորբովի ապարատը, վորի գործածության հետ լավ ծանոթ ե անդամ բժշկական միջին անձնակազմը։ Իսկ ուզական պայմաններում անհրաժեշտ ե ոգտվել Դուբրովի ապարատից, վորը հասարակ կառուցվածք ունի, և այդպիսին ամեն մի բժիշկ կարող ե սարքել յեղած շերից և խողովակներից։ Այս ապարատի առավելությունն այն ե հաճարվում, վոր ապարատը շրջվելիս արյունը ֆիզիկական որենքի համաձայն, իր ծանրության շնորհիվ ինքնահոսով անցնում ե ընդունողի յերակների մեջ։ միայն հազվագյուտ դեպքերում են ստիպված լինում դիմել Ռիդչարդ-

սոնի բալոնի ոգնության՝ արյան մակերեսի վրա ողով ճնշում գործ դնելու համար:

Նախքան դոնորից արյուն վերցնելը, անհրաժեշտ ե պատրաստել բոլոր գործածվելիք նյութերը և ստերիլիզացիայի յենթարկել ապարատն ու նրա մասերը: Արյուն վերցնելու համար գոյություն ունեն հատուկ, Դյուֆֆոյի ասեղներ, վորոնք ունեն մոտ 5—6 սմ. յերկարություն և 2—3 մմ. արտաքին տրամագիծ (նկար 9):



Նկար 9. Դյուֆֆոյի ասեղը:

Թե այդ ասեղը և թե նրան միացած ուետինե խողովակը, վորով պետք ե արյուն վերցնել դոնորից, անպայման պետք ե պարաֆինացման յենթարկվեն, նախքան արյուն վերցնելը: Պարփինացման համար վերցնում են  $3\%$  պարաֆինի լուծույթ յեթերի մեջ: Այդ նպատակով լուծում են 3,0 պարաֆինը 100,0 Aether sulfuricum-ի մեջ: Պարփինը շատ հեշտությամբ լուծվում է յեթերի մեջ սրվակը մի քանի անգամ թափահարելուց հետո: Այդ լուծույթի մեջ կարելի յե պահել ստերիլիզացիայի յենթարկված ասեղներն իրենց խողովակներով, վորոնց հանելուց հետո կարճ ժամանակամիջոցում յեթերն ողն ե ցնդում, թողնելով ասեղի կամ խողովակի պատերի վրա պարափինի շատ բարակ, նուրբ շերտ: Կարելի յե նաև պարափինի լուծույթից մի քիչ ածել ուետինե խողովակի ծայրից: Նման դեսլքերում այդ լուծույթը թափվում ե ասեղի լուսանցքով, և յեթերը ցնդելուց հետո ասեղի և ուետինե խողովակի պատերի վրա նմանապես պարափինի բարակ շերտ միանգամայն հարթեցնում ե ասեղի և խողովակի լուսանցքի պատերը և այդպիսով հնարավորություն չի տալիս արյան արգելքների հանդիպել և շուտ մակարդվել:

Արյան մակարդումը խանգարելու և արյունը հեղուկային դրության մեջ պահելու համար գործ են ածում մի շարք քերմիական պրեպարատներ—ստարիլիզատորներ, վորոնց մասին հետագայում մանրամասն տեղեկություններ կտանք: Այստեղ անհրաժեշտ եմ համարում նշել միայն natr. citricum-ը, վորը չա-

շիտպանց մեծ գործածություն ունի վորպես արյան առաջնակարգ ստաբիլիզատոր։ Այդ քիմիական նյութն առանձնապես թունավորող հատկություններ չունի և հնարավորություն և առլիս բավական յերկար ժամանակով խանգարել արյան մակարդումը։ Նրա թունավորող քանակը բոլոր հեղինակների կողմից ընդունվում է մոտավորապես՝ 15,0 մաքուր աղ, վորը վոչ մի դեպքում կարիք չի լինի ներմուծել հիվանդի արյան մեջ։ Իզոտոնիկ և համարվում ուն. citricum-ի  $3,8^{\circ}/_0$  լուծույթ։ Ցիտրատային արյուն պատրաստելու համար դուրս են գրում այդ աղի լուծույթը հետեւյալ բեցեպտում։

Natr. citricum 3,8

Sol physolog 100,0

Ds. sterilis

Ամեն 100,0 արյան համար վերոհիշյալ<sup>7</sup> լուծույթից՝ վերցնուած են 10,0. որինակ, յելլեւ մեզ անհրաժեշտ և լինում հիվանդին փոխներարկել 500,0 արյուն, մենք նախորոք Բոբրովի կամ Դուքրովի ստերիլ ասլարատի մեջ պետք է լցնենք 50,0 ստերիլ ցիտրատային լուծույթից և նրա վրա պարագինացման յենթարկված ասեղի և խողովակի միջոցով բաց թողնենք դոնորից 500,0 արյուն։

### ԴԱՆՈՐԻՑ ԱՐՅՈՒՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Դոնորից արյուն վերցնելու համար պառկեցնում են նրան սեղանի վրա, գլուխը դեպի ցած թեքած, հարմար գլությամբ մերկացնում են նրա նախաբազուկը և բազուկի ստորին յերրորդականը, ապա պատրաստում են ոպերացիոն դաշտը, այն ել արմաւնկային ծալքի շրջանում, վորտեղ գանվում և vena mediana cubiti-ն։ Այդ յերակն ամենահարմարն և արյուն վերցնելու համար, վորովհետեւ նա բավական մակերեսային և, փականներ չունի, հաղորդակցում և խորանիստ յերակների հետ և լավ ուռչում, լցվում է։ Ավելի նպատակահարմար և ոգտվել վերօհիշյալ յերակի դրսային ճյուղից, վորպեսզի խուսափել ներքին մասում գանվող կուրիտալ զարկերակի ֆլասումից։ Ոպերացիոն դաշտը պատրաստելուց հետո, դոնորի բազուկի ստորին յերրորդական շրջանում դնում են սեղմում են այն-

քան, վոր սկզբնական շըջանում անհետանա դոնորի պուլսը, ապա հետգիետե թուլացնում են սեղմանը մինչև այն ժամանակ, յերբ նորից (սկսվում ե) շոշափիվում ե պուլսը, վորից հետո պահում են սեղմանը մինույն ճնշումով: Նման միջոցառումները չափազանց անհրաժեշտ են, վորովհետեւ կուրիտալ յերակները այդպիսի ճնշման ազդեցության շնորհիվ լավ ուռչում, փքվում են, ճնշումը նրանց մեջ ավելանում ե և ասեղը մտցնելուց հետո արյունն առատ հոսանքով, հաճախ առանց ընդհատումների, թափիվում ե անոթի մեջ, վորտեղ գտնվում ե ցիտրատային լուծույթը: Սեղմանը դնելուց և ոպերացիոն դաշտը պատրամտելուց հետո, ոպերատորը իր ձախ դաստակի առաջին մատով ֆիքսում ե դոնորի vena mediana cubiti-ն, իսկ աջ ձեռքով մտցնում ե ասեղը յերակի մեջ: Ասեղը պետք ե դնել իր սուր ծայրով մաշկի վրա ձիշտ այնպես, վոր հորիզոնական դժի հետ մոտավորապես  $20^{\circ}$  ունեցող սուր անկյուն կազմի: Ապա առանց շտապելու ծակում են մաշկը, ասեղի ծայրով շոշափում են յերակը, հաղթահարում են յերկրորդ դիմադրությունը, այսինքն ծակում են յերակի պատը և հասնում են անոթի լուսանցքին, վորից հետո խողովակից արյունն առատորեն սկսում ե հոսել: Խողովակի ծայրը պետք ե մտցնել այն անոթի մեջ, վորտեղ գտնվում ե ցիտրատի լուծույթը և վորից պետք ե փոխներարկում կատարվի. ցիտրատի լուծույթի վրա արյունը չպետք ե թափվի շատ բարձրից, վորպեսզի փրփուր չառաջանա:

Յեթե արյան հոսանքը դանդաղում է կամ արյունը կաթիլներով ե թափվում անոթի մեջ, նման գեղքերում անհրաժեշտ ե հանձնարարել դոնորին բանալ և սեղմել համապատասխան ձեռքի բոռնցքը. կարելի յե նաև նախարարուկի մասակատարել դաստակից դեպի արժունկային հողը և այդպիսով բավական ուժեղացնել արյան հոսանքը: Արյան մակարդումը խանդարելու նպատակով ոպերատորի ողնականն անոթի թեթև շարժումներով աշխատում ե խառնել ցիտրատի լուծույթը թափվող արյան հետ: Շատ ցանկալի յե անոթը ցիտրատային արյունով տեղափորել տաք ջրի մեջ, վորի ջերմաստիճանը մարմնի ջերմաստիճանից, ալսինքն  $37-38$ -ից բարձր չպետք ե լինի: Անհրաժեշտ քանակությամբ արյուն ստանալուց հետո, ոպերատորի ողնականը հայտնում ե այդ մասին, ոպերատորը կարգադրում

ե հեռացնել սեղմանը, իսկ ինքը իսկույն հեռացնում ե ասեզը դոնորի յերակից։ Մաշկի ծակած տեղը մի քիչ յոդ են քառում և դնում փոքր ասեպտիկ չոր վիրակապ։ Կարիք չկա հիշեցնել, վոր վերոհիշյալ բոլոր ձեռնարկումները պետք ե կատարվեն միանգամայն ասեպտիկ, մաքուր միջավայրում, այն ե ոպերացիոն սենյակում։ Շատերը դոնորին ցավ չպատճառելու համար, յերակի վրա դտնվող մաշկի տակը մի քանի կաթիլ  $1|2^0|_0$  նովոկայինի լուծույթ են սրսկում։ Բայց մեր ֆիլիալն արյան փոխներարկումների ժամանակ այն յեղանակը չի գործադրել և բացասական վոչինչ չի նկատել։ Հաճախ նովոկայինի լուծույթը արտափքելով մաշկը, անհետացնում ե նրա տակը դտնվող յերակը։ Անհրաժեշտ ե հիշել, վոր վոչ մի դեպքում չի թույլատըրվում դոնորի վրա venesectio կատարել։ Նմանապես չի թույլատըրվում կտրվածքներ կատարել նրա մաշկի վրա յերակը հայտնաբերելու համար։

Արյունը վերցնելուց հետո դոնորին առաջարկում են մի քիչ մնալ պառկած դրության մեջ, ապա տալիս են նրան մի կամ յերկու բաժակ քաղցր թել և աղատ թողնում։ Խորհուրդ ե տրվում արյուն վերցնելուց հետո դոնորին նաև լավ կերակրել։

Ստացված ցիտրատային արյունը միտք չկա յերկար պահել, այլ անհրաժեշտ ե անմիջապես փոխներարկել հիվանդին։ Պետք ե պատրաստ դրության մեջ պահել հիվանդին, ցանկալի յե հարևան սենյակում և դոնորի դնալուց հետո անմիջապես արյան փոխներարկում կատարել։ Հիվանդին ել պառկեցնում են սեղանի վրա, պատրաստում են ոպերացիոն դաշտը արմունկային ծալքի շրջանում և դնում են սեղմանը ճիշտ այնպես, ինչպես նկարագրեցինք դոնորի նկատմամբ։ Թե Բոբրովի ապարատով և թե այլ ապարատներով արյան փոխներարկում կատարելիս, անպայման պետք ե նախորոք լցնել արյունով այն խողովակը, վորով արյունը հոսում ե հիվանդի յերակի մեջ։ Խողովակը արյունով լցնելուց հետո, ասեղը մտցնում են հիվանդի յերակի մեջ, և յերբ սկսում ե արյունը հոսել, միացնում են ասեղը վերոհիշյալ խողովակի հետ։ Ոգային եմբոլիայից խուսափելու համար ամեն կերպ պետք ե աշխատել, վոր խողովակը արյունով լցնելուց հետո բոլորովին ող չմնա այդ խողովակի մեջ։

Արյունը Դուրբովի ապարատից անցնում է հիվանդի յերակների մեջ ինքնահոսով. միայն հազվագյուտ գեղքերում անհրաժեշտ է լինում դիմել ողի ճնշմանը: Բորբովի ապարատից ել արյունը պետք է փոխներարկել ողի շատ թույլ ճնշման տակ և չափաղանց դանդաղորեն:

Արյան փոխներարկման սկզբում, այսինքն առաջին ըոպեների ընթացքում, անպայման պետք ե կատարել Ելեկերի բիոլոգիական փորձը, վորը կայանում է հետեւյալում. հիվանդի յերակի մեջ միևնույն ապարատից 20—30,0 արյուն ներմուծելուց հետո, սեղմում են ռետինի խողովակը հենց ասեղի մոտ, դադարեցնում են արյան հոսանքը խողովակում և սպասում են մոտ 5 ըոպե: Յեթե տվյալ ժամանակամիջոցում հիվանդի հետ վոչ մի աննորմալ յերեսույթ չի կատարվում, ուրեմն արյունն ոտար չե և արյան փոխներարկումը կարելի յե շարունակել: Բայց յեթե հիվանդը սկսում ե անհանդստանալ, կապտել, գունատվել, դանդատվել ցավերից՝ կրծքային վանդակի և գոտկային շրջաններում, անպայման պետք ե ընդհատել արյան փոխներարկումը: Նման դեպքերում հիվանդի շնչառությունը հաճախանում և մակերեսային ե դառնում, արյան ճնշումը խիստ նվազում ե և պուլսն արագանում: Այդ յերեսույթներն իրոք ապացույց են այն փաստի, վոր գոնորի երիտրոցիտներն ընդունողի որդանիզմում ազլյուտինացիայի և հեմոլիզի լեն յենթարկվում, վոր փոխներարկվող արյունը ոտար ե ընդունողի համար, կարող ե մահ պատճառել նրան: Փորձը ցույց ե տվել, վոր 20—30,0 ոտար արյունից առաջացած պաթոլոգիկ յերեսույթները հեշտությամբ հաղթահարվում են ընդունողի որդանիզմի կողմից, բայց ավելի մեծ քանակությունը թունավորում, սպանում ե ընդունողին: «Բիոլոգիական փորձի» իմաստը հենց այն է, վոր հեշտությամբ վորոշվի գոնորի և բեցիպի յենտի արյունների համատեղությունը:

Յերբ «բիոլոգիական փորձը» հաջող ե անցնում, այն ժամանակ հաճախ առանց վորեւե վտանգի կարելի յե շարունակել արյան փոխներարկումը, բայց պետք ե այդ գործողությունը կատարել բավական դանդաղ:

Այդ տեսակետից շատ նպատակահարմար է փոխներարկումը կատարել Դուրբովի ապարատի միջոցով, վորովհետև արյան հոսանքը այդտեղ տեղի յե ունենում հենց իր ուժով, առանց ողի

ճնշման, բավական դանդաղ ինքնահոսով։ Վերջին հանգամանքը շատ կարևոր եւ այն տեսակետից, վոր արյուն ընդունողի սիրտը և անոթները կարողանում են ընտելանալ ընդունողի արյան նոր քանակին և այդպիսով տանում են նոր բեռնվածությունը։ Բորբովի ապարատով արյան փոխներարկում կատարելիս, անհրաժեշտ եւ ողը չափազանց դանդաղորեն ներմուծել ասլարատի մեջ, վորպեսդի ապահովված լինի արյան դանդաղ հոսանքը խողովակի մեջ։ Այդ դանդաղ հոսանքը հաճախ ի վիճակի չի լինում իր հետ մակարդված արյան կտորներ տանել և եմբոլիա առաջացնել բեցիպիյենտի որդանիզմում։ իսկ մակարդված արյան շատ փոքրիկ կտորները, թեպետ յերբեմն ել աննկատելի կերպով անցնում են ընդունողի յերակների մեջ, բայց բարեբախտաբար առանձին, աչքի ընկնող բարդություններ չեն առաջանում։ Թե Բորբովի և թե Դուրբովի ապարատով արյան փոխներարկում կատարելիս, անպայման պետք եւ թողնել անոթի հատակին գտնվող արյան վերջին փոքր քանակը, մոտավորապես  $20-30,0$ , վորովինեամ անգամ ցիտրատացին արյունը նստվածք եւ տալիս, մակարդված արյան բազմաթիվ փոքրիկ կտորներ։ Այդ պատճառով ել ապակե արյունատար խողովակը Բորբովի ապարատում չպետք եւ հատակին հասնի, այլ լինի  $1-2$  սմ. վերև, իսկ Դուրբովի ապարատում նույն խողովակը, ապարատը շրջելուց հետո, պետք եւ ուետինե խցանից մի  $2-3$  սմ. ավելի խորը մմտնի անոթի մեջ։


Արլան փոխներարկման ժամանակ ապարատի մեջ վերջին փոքրաքանակ արյունը թողնում են նաև այն պատճառով, վոր արյունատար ապակե խողովակի ծայրը հանկարծակի չբացվի, ողը չմտնի խողովակի մեջ և մահացու եմբոլիա չառաջացնի։

Յեթե հանկարծ արյան հոսաքն ընդհատվում ե, նման դեպքերում անհրաժեշտ ե ստուգել ասեղի լուսանցքը, քիչ տեղահան անել ասեղը, կամ հենց ստուգել արյունատար խողովակը։ Հեշտությամբ հնարավոր ե լինում պարզել և վերացնել հոսանքի ընհատման պատճառը։

Արլան վոչ խուղղակի փոխներարկման համար կարելի յեղագել նաև պրոֆ. Սպասոկովկուց առաջարկած ապարատից, այն եւ Բ.Ռ.Կ.Կ.-ի ապարատից (Նկար 10)։

Այդ ապարատը նման ե Բորբովի ապարատին, միայն այն-

տարրերությամբ, վոր արյունատար խողովակի սկիզբը ՌՈՒԿ-ի ապարատում գտնվում է անոթի հատակից լերկու սանտիմետր վեր։ Ապարատի պարանոցում գտնվող ռետինե խցանով անցնում է միայն մի ապակե խողովակ, վորի միջով ող և ներմուծվում



Նկար. 10 Ռ.Ռ.Կ.Կ.-ի ապարատը (Պօ. Օնդ. Կր. Կր.)

ապարատի մեջ, վորպեսզի անհրաժեշտ դեղքում ձնշում դորձ դրվի արյան մակերեսի վրա։

Անպայման պետք է խուսափել արյան փոխներարկում կատարել հասարակ ապակե ձագարով, վորին միացած և ռետինե խողովակն իր առեղով։ Հասկանալի լի, վոր նման դեղքերում արյունը հեշտությամբ կարող է վարակվել ողից և բացի դրանից, վոչ միշտ հնարավոր կլինի ապահովել պատշաճ հոսանքը։

Քիչ քանակությամբ ցիտրատային արյուն կարելի յէ փոխակերպել զանազան տեսակի շպրիցներով. այդ նպատակով կարելի յէ ոգտագործել 50,0-նոց կամ ավելի փոքր շպրիցներ. Նպատակահարմար ե շպրիցը միացնել կարճ ուղարինե խողովակի հետ, վորն իր ծայրին ունի հատուկ ասեղ:

Մենք այդ նպատակով հաջողությամբ մի քանի անգամ ոգտագործել ենք Ելեկերի 50,0-նոց շպրիցը. Արյուն ստանալուց հետո, հիվանդը վորոշ ժամանակ պետք է մնա պառկած դրության մեջ. Նրան անհրաժեշտ է 1 կամ 2 րաժակ քաղցր թեյ և լոլի ծածկել. Միանզամայն սխալ և այն կարծիքը, վոր իրը թե արյան փոխներարկում լերթենել հիվանդների նկատմամբ կարելի յէ կատարել բուժաբանային պայմաններում: Նման կարծիքը պետք ե վտանգավոր համարել, վորովհետեւ այդ կարող է դըժրախսությունների պատճառ դառնալ: Առհասարակ արյան փոխներարկմանը պետք ե նայել, վորպես մի լուրջ ոպերացիայի և շունչ 1—2 որով այդ ոպերացիայից հետո նման հիվանդներին թողնել ստացիոնարում բժշկի հսկողության տակ: Պատերազմի պայմաններում արյան փոխներարկումից հետո վիրավորին նույնալիք պետք է պահել ոթարանային կալաններում և վոչ մի դեպքում անմիջապես բացահանձան (եվառկացիալի) չհնթարկել: Հաղվագույն դեպքերում միայն, նման վիրավորներին կարելի յէ բացահանել արյան փոխներարկումից 2—3 ժամ անցնելուց հետո: Արյան փոխներարկումից հետո կարող են տեղի ունենալ մի շաբք ծանր բարդություններ, վորոնք լերբեմն ել արյուն բնդունողի մտնվան պատճառ են հանդիսանում: Ի հարկեւ այդ մահացու բարդությունները տեղի յեն ունենում վորոշ սխալների պատճառով. մեր Միության մահմաններում արյան փոխներարկման դործը քանի դնում, ավելի յէ դարդանում, իսկ ծանր բարդությունների թիվը աստիճանաբար պակսում է:

Ամենածանր բարդությունը, ինչպես վերը նշեցինք, դա հեմոլիտիկ շոկն է, վորն առաջանում է ուսար արյուն փոխներարկելուց հետո, աղլյուտինացիալի և հեմոլիզի հետևանքով:

Յերբեմն դոնորի երիարոցիտների հեմոլիզը և նրանից առաջացած «հեմոլիտիկ շոկ» նկատվում է մի քանի ժամից հետո, կամ անգամ հետեւյալ որը: Այդպիսի դեպքեր նկարագրված են և միշտ պետք է աշքի առաջ ունենալ: Մինչեւ վերջին տարիները

«հեմոլիտիկ շոկի» դեմ բժշկությունը չուներ պայքարի վոչ միջոց, բայց 1932 թվականին սլրոֆ. Հեսսեն իր ոգնական բժիշկէ ծիլատովի հետ միասին առաջարկեցին պայքարի մի ուժեղ միջոց, այն ե՛ վտանգված հիվանդին նորից համատեղի արյան փոխներարկում կատարել: Նրանց թե եքսպերիմենտալ և թե կլինիկական փորձը տվել ե միանգամայն դրական արդյունք: Որինակ, չեթե 0 խմբի բեցիպիյենտին սխալմամբ արյան փոխներարկում ե կատարվում Ա խմբի դոնորից և «հեմոլիտիկ շոկ» ռասացվում, ապա անհրաժեշտ ե շատ շտապ կերպով, առանց ժամանակ կորցնելու, վտանգված բեցիպիյենտին նորից արյան փոխներարկում կատարել, բայց այս անգամ համատեղի 0 խմբի դոնորից: Պրոֆ. Ալիշնեվսկին առաջարկել ե «հեմոլիտիկ շոկի» դեմ սլալքարի մի ուրիշ միջոցով, այն ե՛ յերիկամների շուրջը դանըլող ներվացին ցանցի նովոկայինի բլոկը, վորը նույնպես դրական արդյունքներ ե տալիս: Մեր Փիլիալի ու նրա կայանների աշխատակիցների միջոցով արված 450 արյան փոխներարկումներից դեռևս չի յեղել «հեմոլիտիկ շոկի» վոչ մի դեպք:

Յերբեմն, միևնույն անհատին կրկնակի արյան փոխներարկումներ կատարելուց հետո ստացվում ե այսպես կոչված անաֆիլատիկ շոկ, վորը հետեանք և որդանիզմի գերզգայնության՝ հանդեպ ոտար սպիտների: Այս բարդության ընթացքում նկատվում ե սրտի աշխատանքի և արյան ճնշման ուժեղ անկում, սրտախառնություն, փսխում, յերբեմն լուծ, գլխացավեր և խիստ urticaria: Հիվանդի ջերմաստիճանը խիստ բարձրանում, յերբեմն մինչև 40—41 աստիճանի յե համնում: Նման բարդությունները շատ քիչ են պատահում: Բուժման նպատակով ամեն կերպ պետք ե աշխատել սլաշտապանել սրտի կանոնավոր ֆունկցիան գանաղան գրգռան յութերով:

Արյան փոխներարկումներից հետո ավելի հաճախ նկատվում ե վոչ սպեցիֆիկ սլրոտեյինային լուսակցիա, վորի պատճառները մինչև որո ել լիովին սլարդված չեն: Շատերն այն կարծիքի են, վոր այդ ռեակցիանի առաջացման մեջ մեծ դեր են կտարբում փոխներարկող արյան սառեցումը, ապարատի և խողովակների վոչ բավականաչափ մաքուր լինելը կամ գործածվելիք քիմիական նյութերի կեղտոտությունը: Այդ ռեակցիան ըստ իր ուժի լինում ե ծանր, միջակ և թեթև կերպով արտահայտված:

Հիվանդն արյուն ստանալուց մի քանի ժամ հետո զգում է թուլություն, գլխացավեր, դողոցք ամրողջ մարմնում. նրա ջերմաստիճանը, նաևած ռեակցիայի ուժին, քիչ թե շատ բարձրանում է, Վորոշ ժամանակից հետո վերոհիշյալ ախտանիշները հետզհետեւ անհետանում են: Պրոտելինային ռեակցիան միշտ ելլինում է թե անմիջական և թե վո անմիջական արյան փոխներարկումներից հետո: Մեր ֆիլիալի պրակտիկայում այդ ռեակցիան նկատվել է մոտ  $30^{\circ}/_0$ -ով: Բուժումը պետք է լինի սխմալումատիկ: Պետք է ասել, վոր նման ռեակցիաները, անգում նրանց ծանր տեսակներն արյուն ստացողների նկատմամբ ժահացու վտանգ չեն ներկայացնում:

## ԱՐՅԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՑԻԱՆ

Արյան փոխներարկման գործը պահանջում է առաջին հերթին լուծել արյուն մատակարարողների՝ դոնորների պրոբլեմը: Անգամ խաղաղ պայմաններում մեծ հիվանդանոցներում և կլինիկաներում հաճախ արյան շտապ փոխներարկումների մեծ կարիք է զգացվում, բայց դժբախտաբար այդ մոմենտին դոնոր չի լինում: Դոնոր ստանալն ավելի է դժվարանում դիշելային ժամերի ընթացքում: Յեթե խաղաղ պայմաններում արյան փոխներարկման հարցում հանդիպում են ալղոֆիսի դժվարությունների, ապա հասկանալի պետք է լինի, թե ինչպիսի անհաղթահարելի դժվարություններ կարող են պատահել պատերազմի ժամանակ, յերբ անհրաժեշտ և լինում սուր արյունահոսությունների դեմ պայքարել արյան բաղմաթիվ փոխներարկումներով: Ահա այդ է պատճառը, վոր միշտ ել թ՛ խաղաղ և թե գլխավորապես պատերազմի պայմաններում պետք է պատրաստի արյուն ունենալ, վորը հնարավորություն կստեղծի աղատել դոնոր վորոնելուց: Ներկայումս բոլորն ել այն կարծիքի են, վոր արյան կոնսերվիան չափազանց կարեսը հարց ե և կարու և շատ լուրջ ուսումնասիրության: Դեռ 1914—1918 թ. համաշխարհային պատերազմի ժամանակ անգլիական և ամերիկական բանակներում լայն չափերով և դրական հետեանքներով կատարում եյին կոնսերվացիայի յենթարկված արյան փոխներարկումներ: Այստեղ գլխավորապես կիրառվում եր Peyton-Rous-ի

յեղանակով կոնսերվացիայի յենթարկված արյան փոխներարկում։ Արյան մակարդումը խանգարելու և արյունը յերկար ժամանակով ստարիլ վիճակում պահելու համար Peyton-Rous-ը և Turner-ը վերցնում եյին 5 բաժին  $5,4^{\circ}/_0$  գլյուկոզայի լուծույթ, 2 բաժին  $3,8^{\circ}/_0$  sol. natr. citr. և 3 բաժին արյուն և խառնում իրար հետ։ Այդ լուծույթների խառնուրդի շնորհիվ արյունը հեղուկային վիճակում մնացել է մոտ 4 շաբաթ, կամ ել ավելի։ Ներկայումս գործածության մեջ եւ տարբեր յեղանակներով կոնսերվացիայի յենթարկված արյուն, վորի փոխներարկումը շատ դրական արդյունք եւ տալիս և համարյա հետ չի մնում թարմ արյան փոխներարկումներից։ Վերջին տարիների ընթացքում natr. citricum-ի սակավության պատճառով Մոսկվայի Արյան Փոխներարկման Կենտրոնական Ինստիտուտը լուրջ կերպով զբաղվել է արյան ստարիլիզատորների հարցով. այդուղղությամբ նա արդեն հասել է մեծ հաջողությունների։ Պրոֆ. Բալախովսկին, Գինսբուրգը և ուրիշներն այդ ինստիտուտի լաբորատորիաներում արդեն ստացել են արյան լավ ստարիլիզատորներ։ Նրանց հաջողվել եւ պատրաստել այնպիսի մի իզոտոնիկ հեղուկ, վորը շատ յերկար ժամանակով արյունը պահում է ստարիլ, այսինքն՝ հեղուկային վիճակում։ Այդ հեղուկը պրոֆ. Բալախովսկին և Գինսբուրգը անվանել են Ի.Պ.Կ. (институт переливания крови)։ Հեղուկի մեջ մտնում են հետեւյալ նյութերը։

Rp. Natr. chlorat	7,0
Natr. citric . .	5,0
Kali chlorati . .	0,2
Magnes. sulfur.	0,04
Ag. bidestil.	1000,0

Կոնսերվացիայի համար այդ հեղուկը խառնում են հավասար քանակությամբ արյան հետ և այդ խառնուրդը պահում են սառցարանում  $0^{\circ}$ -ից մինչև  $+6^{\circ}$  ջերմության պայմաններում։ Այդ ջերմությունը ամենալավ է կոնսերվացիայի յենթարկված արյունը պահելու համար, վորովհետև  $0^{\circ}$ -ից ցած ջերմաստիճանում արյունը սառչում է (մակարդվում ե), իսկ  $+6^{\circ}$ -ից բարձր մինելու դեպքում արյան մեջ պատահմամբ ընկած մանրեներն

սկսում են զարգանալ և քայքայել արյունը։ Թե գրականության մեջ գոյություն ունեցող կարծիքները և թե մեր ֆիլիալի ձեռք բերած համեստ փորձն իրոք ապացուցել են, վոր «Ի.Պ.Կ.» հեղուկը առայժմ լավագույնն ե արյան կոնսերվացիայի համար։

Մոսկվայի Արյան Փոխներարկման ինստիտուտի աշխատակիցների ջանքերով ստացված են նաև ուրիշ ստաբիլիզատորներ, վորոնք արդեն գործածության մեջ են։ Նրանք սինտետիկ կերպով ստացել են սինանտրին և հեղարին ստաբիլիզատորներ։ Այս հանգամանքը մի կողմից հնարավորություն ե տալիս ընտրել ավելի լավ, վոչ թունավոր ստաբիլիզատոր, մյուս կողմից ել զարկ և տալիս արյան փոխներարկման գործի զարգացմանը։

Յեթե կարիք ե զգացվում արյունը պահել մեկ կամ յերկու որ և հետո փոխներարկել, այդպիսի գեղքերում կարելի յե ոգտագործել միայն ուժ. citricum-ի լուծույթը։ Բայց ավելի լերկար ժամանակով պահելու համար պետք է գործադրել «Ի.Պ.Կ.-ի» հեղուկը։

Արյան կոնսերվացիայի համար ոգտագործում են նաև խաղողի շաքարի (գլյուկոզ) 5,4% նոց լուծույթ։ Գլյուկոզայի հակամակարդիչ հատկությունները թույլ են արտահայտված և բացի դրանից, այդ նյութի լուծույթները շատ լավ միջավայր են հանդիսանում մանրեների զարգացման համար։ Մյուս կողմից արյան փոխներարկման գործում գլյուկոզան ունի նաև իր արժանիքները, վորակես կարդիոտոնիկ և սննդային նյութ։

Կոնսերվացիայի համար ներկայումս արյունը վերցնում են զանազան աղբյուրներից. այդ նպատակով ոգտագործում են գոնորների արյունը, բուժական նպատակով տարրեր հիվանդներից բաց թողնվող արյուն (ուտիլ արյուն), թարմ դիակներից վերցրած արյուն, ծննդաբերության ընթացքում պորտալարից վերցրած արյունը և այլն։ Պրոֆ. Բուրդենկոյի կլինիկայում ոգտագործում են autotransfusio-ի համար հենց այն հիվանդների արյունը, վորոնց պետք ե արվի ծանր ոպերացիա. Նրանց արյունը ամենայն զգուշությամբ բաց են թողնում, կոնսերվացիայի յեն յենթարկում, պահում են վորոշ ժամանակ և հենց ոպերացիոն սեղանի վրա, կամ ոպերացիայից անմիջապես հետո փոխներարկում են միևնույն հիվանդին։ Հետագա փոխներարկում-

ների համար արյունը կարելի յե վերցնել և կոնսերվացիայի յենթարկել հենց հիվանդների մոտիկներից, ազգականներից:

Բայց վորտեղից վոր վերցնելու լինեն արյունը, նախքան արյան կոնսերվացիան, ամենայն մանրամասնությամբ և լրջությամբ պետք ե ուսումնասիրվի արյուն տվող աղբյուրը: Վորեւ կասկածի դեպքում նման արյունը չպետք ե ոգտագործվի: Կարելի յե կոնսերվացիայի յենթարկել և ոգտագործել փոխներարկումների համար միայն վերջնականապես ստուգված, առողջ արյունը:

Ինչպես վերը նշեցինք, արյան կոնսերվացիայի համար պետք է կատարյալ ասեպտիկա կիրառել, վորը հնարավորություն և տալիս, առանց փոփոխությունների, լերկար ժամանակով պահել արյունը և ոգտագործել փոխներարկումների համար: Յեթե արյան մեջ վարակ ե առաջանում, ապա այդ դեպքում մի քանի որվա ընթացքում կոնսերվացիայի յենթարկված արյան շիճուկը պըղտորվում, ծածկվում ե փառով, առաջ ե գալիս հեմոլիզ և արյունը անպետքանում ե փոխներարկման համար: Հաճախ կոնսերվացիայի յենթարկված արյան մեջ սապլոֆիտներ են հայտնաբերվում (bac. subtilis), վորոնք արյան փոխներարկման դեպքում վոչնչանում են recipient-ի արյան բակտերիցիդ ուժով: Բայց այնուամենայնիվ ամեն անդամ արյուն փոխներարկելուց առաջ անհրաժեշտ ե կատարել կոնսերվացիայի յենթարկված արյան բակտերիոլոգիական հետազոտություն և այդպիսով պարզելնրա ստերիլությունը: Սառցարանից բերված կոնսերվացիայի յենթարկված արյունը փոխներարկելուց առաջ անհրաժեշտ ե տաքացնել մինչև մարմնի տաքության ջերմաստիճանը:

Կոնսերվացիայի յենթարկված անդամ ստերիլ արյունը ժամանակի ընթացքում փոփոխության և յենթարկվում և մոտավորապես մի ամսից հետո բոլորովին անպետքանում և ոգտագործման համար: Մեր ֆիլիալի պրակտիկայում քսանվեց անդամ կոնսերվացիայի յենթարկված արյան փոխներարկում և կատարվել, ըստ վորում փորձերը միշտ ել անցել են առանց բարդությունների և տվել են լավ հետևանքներ: Բայց մեր փոխներարկումների ընթացքում ոգտագործված արյունը ունեցել է 4—8 որվա հնություն: Մենք մտադիր ենք հետազում ոգտագործել կոնսերվացիայի յենթարկված տվելի հին արյուն:

**Ժամանակի ընթացքում կոնսերվացիայի յենթարկված արյունը յենթարկվում է մեծ փոփոխությունների: Փոփոխվում են թե արյան կարմիր ու սպիտակ գնդիկները, տրոմբոցիտները և թե արյան շիճուկը. Փոփոխվում է արյան կոլոիդալ և ելեկտրոլիտ բաղադրությունը: Վորքան ավելի յերկարատես է լինում կոնսերվացիայի ժամանակը, այնքան ավելի մեծ են լինում նման արյան փոփոխությունները: Շատ հին արյան մեջ կարմիր գընդիկները կերպուրանափոխվում, քայքայվում են. Նրանք հետըզհետե կորցնում են իրենց դիմացկանությունը: Նույնը կատարվում է լեյկոցիտների հետ, վորոնք հետզհետե կորցնում են իրենց ֆագոցիտար հատկությունները: Դրա համար ել պետք է փոխներարկման համար ոգտագործել վոչ շատ յերկար ժամանակ մնացած կոնսերվացիայի յենթարկած արյուն:**

**10 – 12 որից ավելի վաղ կոնսերվացիայի յենթարկված արյունն այնքան ել նպատակահարմար չե փոխներարկման համար: Ճիշտ ե, գրականության մեջ տվյալներ կան, վորոնք ապացուցում են կոնսերվացիայի յենթարկված արյան փոխներարկման դրական հետեանքներն անգամ 28 կամ 30 որ արյունը պահելուց հետո, բայց, իհարկե, դրանք յեղակի դեպքեր, են և չեն կարող որենք լինել:**

**Յեթե արյան կոնսերվացիայի հարցը մեծ նշանակություն ունի խաղաղ պայմաններում, ապա պետք է հասկանալի լինի այդ հարցի կարևորագույն նշանակությունը պատերազմի պայմաններում: Պատերազմի ընթացքում, ինչպես վերը նշեցինք, կորուստների, մարդկային գոհերի մեծագույն տոկոսը լինում է սուր արյունահոսությունների հետեանքով: Այդ սուր արյունահոսությունների դեմ պայքարելու, տասնյակ հազարավոր վիրավորներին ոգնելու համար պետք է ունենալ հարյուրավոր, հազարավոր փթերով արյուն. այդ կարիքը հոգալու համար ամեն մի յերկիր պատերազմի ժամանակ պարտավոր ե ունենալ տասնյակ հազարավոր գոնորներ, վորը միանգամայն անհնարին ե: Զի կարելի յերկրի ջահել, առողջ և կարող ուժերը գրաղեցնել պատերազմի ընթացքում միայն արյուն մատակարարելու գործով, այլ հարկավոր ե գտնել մի այլ յելք: Բատ Մոսկվայի Արյան փոխներարկման կենտրոնական ինստիտուտի տվյալների, յեթե իմպերիալիստական պետությունները կատարեն իրենց իդար և**

ստիպեն մեզ պատերազմել, այն ժոմանակը բոլոր ճակատներում մեր վիրավոր կարմիր մարտիկների բոլոր կարիքները բավարելու համար անհրաժեշտ կլինի ունենալ դո՞նորների 100,000-նոց մի բանակ. հասկանութիւն, վոր այդ անիրազործելի և միանգամայն աննպատակահարմար եւ Միայն արյան կոնսերվացիան է, վոր պատերազմի ընթացքում հաջողությամբ կարող եւ բւծել արյան մատակարարման մեծ պրոբլեմը. Պատերազմի ընթացքում արյան կոնսերվացիան պետք է կազմակերպել թե առաջավոր դժի և թե խոր թիկունքի հիվանդանոցներում և ապա այդ արյունը փոխադրել ոթարանային բուժման կայանները. Անհրաժեշտ դեռքերում յերկրի ներսում պետք է կազմակերպվեն «արյան դործարաններ», վորոնք միշտ պետք է բանակին անհրաժեշտ քանակությամբ արյուն մատակարարեն. Մեծ կարիքի դեռքում անհրաժեշտ կլինի միայն կոչ անել ազդարնակությանը՝ իր քաղաքացիական պարտքը կատարելու յերկիրը պաշտպանող կարմիր մարտիկների հանգիստ. Այդ ուղղությամբ մեծ ոգնություն կարող են ցույց տալ կանայք, վորոնք չեն ոգտագործվում վորովես կովող ուժ. Յեթե յերկրի ներսում զանվոր առողջ քաղաքացիներն իրենց արյունից 100,0—200,0 արյուն տան, դրանով նրանք մեծ ոգնություն ցույց տված կլինին յերկրի պաշտպանության մեծ զործին, իսկ արյան այդ փոքրիկ կորուստից նրանց որդանիզմը բոլորովին չի տուժում և այդ կորուստը շատ շուտ վերականգնվում է. Կարիք չկա հիշեցնել, վոր այդ արյուն մատակարարողներն ել նախորոք պետք և քննվեն ամենայն խոսությամբ և միայն բոլորովին առողջներից պետք և արյուն վերցվի կոնսերվացիայի համար. Բայց ապագա պատերազմների ժամանակ յերեխ բոլորովին կարիք չի լինի դիմել նըման միջոցների, վորովհետեւ կոնսերվացիայի համար անհրաժեշտ քանակությամբ արյուն կարելի կլինի վերցնել թարմ դիակներից. Նկատի ունենալով այդ հարցի կարեւությունը, մենք անհրաժեշտ աեղեկություններ կտանք առանձին դիմում:

Պատերազմի կարիքների համար, ինչպես նաև «խաղաղ բժշկականության» կարիքների համար նպատակահարմար և արյունը կոնսերվացիայի լենթարկել մի վիտրանոց առակե անոթներում. Վերսիշտալ առաջարկի անհրաժեշտությունը բղխում է այն հանգամանքից, վոր պատերազմի պալմաններում սուր ա-

քյունահառաթլուների, շոկի և թունավորումների պատճեռով  
արդան փոխներարկումները կտտորում են 1000,0-ից վոչ ավելի  
քանակությամբ։ բացի դրանից կարիք չկա արդունք կոնսերվա-  
ցիալի լենթարկել մեծ անոթներում, վորովհետեւ անոթի պարու-  
նակությունը կարող է շատ շուտ վարակվել։ Ինչքան ել պահա-  
վերցնելու լինեն կոնսերվացիալի յենթարկված արյունը, այնու-  
ամենալիվ վարակը հեշտությամբ կարող է ըոլորովին անպետ-  
քացնել անոթի մեջ զանգող մնացած արյունը։ Այն անոթները,  
վորոնց մեջ զանգում ե կոնսերվացիալի յենթարկված արյունը,  
ովհեք և ամուր ծածկված լինեն խցանով, լիքը լցված լինեն  
կոնսերվացիալի յենթարկված արյամբ և իրենց մեջ ող չպարու-  
նակեն։ Հասկանալի յե, վոր արյունն ողից հեշտությամբ կարող  
է վարակվել։

Արյան կոնսերվացիալի համար անհրաժեշտ է վերոհիշտ  
մի լիուրանոց ապակե անոթները կիսով չափ լցնել վորեն սոտ-  
րիլիզատորի լուծություն և ապա ավտոկատում յենթարկել լիու-  
րանար ստերիլիզացիալի նպատակահարմար և, վորպես ստորի-  
լիզատոր վերցնել ռ.Պ.Կ.Օի հեղուկը, վորովհետեւ այդ հեղուկը  
իրոք ամենալավ ստարիլիզատորն է և ընդունված է ըոլորի կող-  
մից։ Այդ, կիսով չափ ստարիլիզատոր հեղուկով լցված անոթի  
մեջ ամենայն զգուշությամբ, միանգաման ասեղուիկ պայման-  
ներում բաց են թողնում արյունը և թեթե կերպով թափանա-  
րելով խոռնում են արյունը հակամակարդիչ հեղուկի հետ։ Սրվա-  
կը լցնելուց հետո, ամուր ծածկում են խցանով և զնում են սոտ-  
րանում  $+4^{\circ}$ ,  $+6^{\circ}$  ջերմաստիճանի պայմաններում։ Անհրաժեշտ  
պեղքերում ենց միենուն անոթներից կարելի լի արյան փոխ-  
ներարկում կատարել, արյունն անոթի մեջ նախորոք տաքաց-  
նելով մինչև մարմնի ջերմաստիճանը ( $37^{\circ}$ ,  $38^{\circ}$ )։ Շատ նպատա-  
կահարմար է արյան կոնսերվացիա կատարել ենց Դուրսովի  
սպարատի մեջ։ Կոնսերվացիալի յենթարկված արյունը փոխնե-  
րարկումից առաջ տաքացնում են, միենուն ժամանակ անոթը  
թեթե կերպով թափանարելով շիճուկը խռոնում են կարմիր  
դնդիկների նստվածքի հետ։ Վորովհետեւ արյունը կիսով չափ  
խռոնված է լինում վորեն ստարիլիզատոր հեղուկի հետ, ուստի  
և նա համարյա չի մակարդակում, բաց միշտ ել երիտրոցիաների  
նստվածք (P.O.Ö.) և տալիս։

Կոնսերվացիայի լենթարկված արյունը հաջողությամբ կարելի լի տեղափոխել շատ հեռավոր տարածություններ և տպափոխներարկումներ կատարել:

Այդ արյունը հատուկ արկղների մեջ համապատասխան անոթներում կարելի լի փոխադրել սալլերով, ավտոներով, գնացքներով, շոգենավերով, սավառնակներով, տուանց արյան վորեն մխառվածքներ պատճառելու: Մոսկվայի Արյան Փոխներարկման կենտրոնական ինստիտուտը գնացքներով և ավտոներով կոնսերվացիայի լենթարկված արյուն և փոխադրել շատ հեռավոր վայրեր և հաջողությամբ փոխներարկումներ կատարել Խաբարովսկում, Թիֆլիսում և այլ քաղաքներում: Բայց արյան փոխադրման համար ամենահարմար և ամենալավ միջոցն և սավառնակը: Պատերազմի պայմաններում այդ նպատակով լայն չափերով կարելի լի ոգտագործել սանիտարական սավառնակները:

Սավառնակը շատ կարճ ժամանակամիջոցում անցնում է ահագին տարածություն և արյունը կարող և փոխադրել առանց ցնցումների ու շարժումների: Իսկ լեթե արյունն անոթի մեջ ճանապարհին միշտ շարժման մեջ և, տպա նա ալիքներ և տալիս, փրփրում և, ուստի և նման արյունը շատ հեշտ կերպով կարող և հեմոլիզի լենթարկվել և բոլորովին անպետքանալ փոխներարկումների համար: Իսկ սավառնակը լերկը խորքում կոնսերվացիայի լենթարկված արյունը մի քանի ժամում կարող և հասցնել բշտկական ոգնության առաջավոր կամ գլխավոր կայանները, վորտեղ և արյան փոխներարկումներ են կատարվում պատերազմի դաշտում մխառված մարտիկներին:

Կարելի լի կոնսերվացիայի լենթարկված արյունը սրվակների մեջ ձգել պարագուտներով:

Ռազմական ոթարանային կայաններում նման արյան փոխներարկումն անհամեմատ ավելի լի հեշտանում, վորովինետեղ գործը համարյա կիսվում և կարիք չկա պատրաստություններ տեսնել դոնորից արյուն վերցնելու համար: Բացի դրանից, վորովինետեղ կոնսերվացիայի լենթարկված արյունը շատ նոսր և, ուստի և նրա փոխներարկումը վոչնչով չի տարրերվում ֆիզիոլոգիական լուծույթի փոխներարկումից: Արյան կոնսերվացիայի գլխավոր նպատակն ել հենց այն և, վոր ձեռքի տակ միշտ պատրաստի:

Ափառժեք արյուն լինի և վոր տեխնիկայի տեսակետից նման արյան փոխներարկումը միանգամայն պարզ, բոլորի համար ել մատչելի լինի։ Պատերազմի բուժովնության կայաններն անհամեմատ ավելի յեն շահագրգոված վերոհիշտալ պահանջներով, քան թե թիկունքալին հիվանդանոցները, վորտեղ բարենպատ պահմաններ կան ամեն տեսակի միջամտությունների համար։

## ԴԻԱԿԻ ԱՐՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերջին տարիների ընթացքում մեր Միության մեծ կենտրոններում սկսեցին փոխներարկումների համար ոգտագործել նաև այն արյունը, վորն ստանում են թարմ դիակներից։ Այդ գեղեցիկ մտքի հեղինակը լեզել է պլոֆ. Շամովը, վորը կենդանիների (շների) դիակներից վերցրած արյունը փոխներարկում եր նույն ցեղի նախորոք արնաքամ արված կենդանիներին և ստանում եր միանգամայն դրական հետեանքներ։ Իսկ մարդկանց վերաբերմամբ դիակի արյան փոխներարկումն առաջին անգամ դրական հետեանքով կատարել ե բժիշկ Ռ. Գ. Սակայանը։ Այդ ոպերացիան նա կատարել է Մոսկվայի Սկլիֆասովսկու անվան ինստիտուտում։ 1930 թ. համառկրախական 4-րդ վիրաբուժական համագումարում բժիշկ Սակայանը զեկուցեց դիակային արյան 7 փոխներարկումների մասին, վորոնք տվել ելին փայլուն արդյունքներ։ Ահա այդ ժամանակվանից ե, վոր արդեն դիակային արյան փոխներարկումը դրվում է գիտական հողի վրա և սկսվում է ուսումնասիրվել մեր Միության համարյա բոլոր մեծ կենտրոններում։ Արտասահմանում այս հարցի մասին բոլորովին գաղափար չունեյին և դրանով են բացատրվում այն մեծ հետաքրքրությունը և բազմաթիվ բեցենպիանները, վոր առաջ բերեց պլոֆ. Ա. Ա. Յուդինի մենագրությունը դիակային արյան փոխներարկումների մասին։ Այդ մենագրությունը տպվել է 1933 թ. Փարիզում ֆրանսերեն լեզվով։ Ներկայումս համաշխարհային բժշկական գիտական միտքը շատ է զրադշած այդ հարցով։ սակայն պետք է ասել, վոր դիակային արյան փոխներարկումը բազմակողմանի կերպով ուսումնասիրվում է միայն մեր Միության մեջ։

Դոնորների հարցի դրական լուծման դժվարությունը, բոլոր կարիքների համար պատշաճ քանակությամբ արյուն ունենալու դժվարությունները և, վերջապես, արյան թանգարժեքությունը միանգամայն ակտուալ են դարձնում դիակային արյան պրոբլեմը։ Միանգամայն հասկանալի չե, վոր դիակային արյան ոգտագործումը կրկնապատկվում, յեռապատկվում և պատերազմի պայմաններում։

Դիակային արյան բակտերիոլոգիական, կլինիկական և եքսպերիմենտալ հետազոտությունները վերջին 2–3 տարիների ընթացքում միանգամայն ապացուցեցին, վոր դիակային արյունը կարող է փոխարինել դոնորային արյանը և պետք է լայն չափով ոգտագործվի։ Ներկայումս շատ լայն չափերով դիակային արյունն ոգտագործվում է Մոսկվայի Սկլիֆասովսկու անվան ինստիտուտում, իսկ մեր Միության սահմաններում դիակային արյան փոխներարկումների թիմը արդեն հազարների լե հասնում։

Դիակային արյան ոգտագործման հարցում կարևորագույն նշանակություն ունի այդ արյան հնությունը։ Կարելի լե ոգտագործել դիակից ստացված միայն այն արյունը, վորը վերցնում են վախճանվելուց անմիջապես հետո։ Համենայն դեպս չի թույլատրվում ոգտագործել 6–8 ժամ հետո վերցված արյունը։ Ինչքան ավելի «թարմ» է դիակային արյունը, այնքան ավելի անվըտանգ է նաև լավ հետևանքներ կարելի լե ստանալ փոխներարկումներից։ Յերկար ժամանակով դիակի մեջ մնացած արյունը լենթարկվում է հեմոլիզի, քայլքայվում է ամբողջովին, և բոլորովին փոփոխվում է նրա քիմիական բաղադրությունը։ Էհարկե, այդպիսի թունավոր արյան ոգտագործումը հանցանք պետք է համարել։

Դիակից ստացված արյունը կոնսերվացիայի լեն լենթարկում նույն այն ձևերով, վորը մենք արդեն նկարագրել ենք դոնորային արյան նկատմամբ։ Յեթե դոնորային արյան կոնսերվացիայի ժամանակ անհրաժեշտ է լինում խստագույն ասեպտիկ կիրառել, միանգամայն հասկանալի լե, վոր դիակային արյուն ստանալու և կոնսերվացիայի հարցերում այդ խստագույն ասեպտիկան պետք է կրկնապատկել, յեռապատկել։ Մահը վրա հասնելուց հետո դիակը և գլխավորապես նրա մաշկը շատ կարճ ժամանակամիջոցում կեղադադարվում է, և արյուն վերցնելիս հեշտու-

թիամբ կարելի յե վարակել այդ արյունը բազմաթիվ վիրուլենտ-  
մանրեներով։ Հանկարծամահ յեղած դիակներից վերցրած արյուն-  
ը չի մակարդվում և այդ պատճառով ել կարիք չի զղացվում  
խառնել վորևե ստարիլիզատորի լուծույթի հետ։

Դիակից ստացված արյունը, նախքան նրա ոգտագործումը,  
պետք ե յենթարկվի շատ մանրամասն քննության։ Առաջին հեր-  
թին վտանգավոր են այն մարդկանց դիակները, վորոնք զանա-  
զան վարակիչ և պարագիտար հիվանդություններ են ունեցել:  
Լուրջ ուշադրություն են դարձնում սիֆիլիսի վրա. այդ նպա-  
տակով դիակի արյան հետ դնում են սերոլոգիական բոլոր ռեակ-  
ցիաները (Wasserman, Bordet-Gengou, Kahn, Wern և այլն):  
Բժիշկ Սկունդինայի փորձերը ապացուցել են, վոր կոնսերվա-  
ցիայի յենթարկված դիակային արյան մեջ սպիրոխետներն սկսած  
լեռորդ որից բոլորովին անհետանում են։

Ալգախոսվ կոնսերվացիայի յենթարկված դիակային արյունն,  
անգամ սիֆիլիտիկ արյունը մի քանի որից հետո բոլորովին  
անվտանգ ե դառնում։ Սիֆիլիսի հետքեր գտնելու համար, ա-  
րյունը վերցնելուց հետո, դիակը պետք ե հերձվի փորձված պա-  
թոլոգուանատոմի միջոցով։ Նման միջոցառումներով կարելի յե  
ժխտել մալարիայի, տուրերկուլյոզի և այլ վարակիչ հիվանգու-  
թյունների առկայությունը։ Պետք ե ասել, վոր արյուն ստանա-  
լու համար չի կարելի ոգտագործել ամեն տեսակի դիակներ, այլ  
պետք ե ալգախոսիք ընտրել ամենայն զգուշությամբ։ Ամենից լավ  
ե ընտրել առողջ, ջահել մարդկանց դիակները, վորոնք վախճան-  
վել են տարրեր տեսակի տրավմաներից շատ կարճ ժամանակ-  
միջոցում, առանց հոգեվարքի։ Այդ տեսակետից հարմար ե ընտ-  
րել այն դիակները, վորոնք ունեն գանգի հիմքի կոտրվածք-  
ներ, կրծքային վանդակի ջարդվածք, կամ ստենոկարդիայից,  
ասֆիքսիայից վախճանվածների դիակները։ Պատերազմի պայ-  
մաններում գործն անհամեմատ ավելի յե հեշտանում և վտանգը  
պակսում, վորովհետեւ կարելի յե անհրաժեշտ թվով դիակներ,  
ընտրել և բացի դրանից հայտնի յե լինում, թե վոր սպանված  
բանակայիններն են միանգամայն առողջ յեղել։ Դիակները չպետք  
ե ունենան իրենց արտաքին ծածկույթների խանգարումներ։

Արյուն ստանալու համար՝ համապատասխան սեղանի վրա  
դիակին Trendelenburg-ի դիրք են տալիս։ Ապա նրա պարանո-

ցային շրջանում պատրաստում են ոպերացիոն դաշտը։ Համապատասխան կտրվածքով հայտնաբերվում են ներքին լծերակը (vena jugul. interna) և դանակով բանում են ալդ լերակի լուսանցքը, վորի մեջ մտցնում են հատուկ անկյունաձև ապակե խողովակ։ Արյուն ստանալու համար խողովակը կարելի յէ մտցընել լերակի մեջ կամ դիակի գանգի հիմքի մասը, կամ ել դեպի սիրտը. լերկու դեպքերում ել հնարավոր ե անհրաժեշտ քանակությամբ արյուն ստանալ, թեպետ և շատ հեղինակների փորձերը ցույց են տվել, վոր խողովակը դեպի սիրտը մտցնելիս ավելի քիչ արյուն ե ստացվում։

Յերբ արյունն ինքնահոսով սկսում ե թափվել ապակե խողովակի մյուս ծայրից, ալդ արյունը հավաքում են մի անոթի մեջ, վորտեղ գտնվում ե ստարիլիզատորի լուծույթը. ալդ ստարիլիզատորների լուծույթները պատրաստվում են ճիշտ այնպես և վերցնում են այն քանակությամբ, ինչպես ալդ արվում ե դոնորի արյունը կոնսերվացիայի լենթարկելու համար։ Հանկարծամահ յեղածների դիակալին արյունը վերցնում են առանց ստարիլիզատորների։ Դիակի արյունն ել կարելի յէ շատ լերկար ժամանակ պահել և հետո փոխներարկում կատարել։ Միայն միշտ պետք ե հիշել, վոր դիակից արյուն ստանալու, այն կոնսերվացիայի լենթարկելու և պահպանելու ընթացքում պետք ե կատարյալ ասեպտիկա կիրառել։ Միջին հաշվով 65 kil. քաշ ունեցող դիակից կարելի յէ ստանալ մոտ  $1\frac{1}{2}$  կամ 2 կ. արյուն։

## ՀԵՏԵՐՈԳԵՆ ՅԵՎ ԱՅԼԱԽՄԲԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄ

Դերջին տարիների ընթացքում թե արտասահմանում և թե մեր Միության սահմաններում նորից սկսեցին արյան փոխներարկման համար ոգտագործել հետերոդեն արյուն, կենդանուց վերցրաց արյունը ներարկել մարդու որդանիզմի մեջ։ Հայտնի յէ, վոր հեռավոր անցյալում դործածության մեջ ե յեղել հետերոդեն արյունը։ Հիվանդին արյուն փոխներարկելու նպատակով հաճախ ոգտագործում ելին գառան, հորթի և այլ կենդանիների արյունը։ Ինչպես պատմական մասում նշեցինք, ալդպիսի փոխներարկումները համարյա միշտ անհաջողությամբ եյին վերջա-

նում. հիվանդի շիճուկը, ստանալով կենդանու վոչ համատեղի ոտար արյունը, ազլուտինացիայի և ապա հեմոլիզի յեր յենթարկում այդ արյան երիտրոցիտները. իսկ հեմոլիզի հետևանքով հիվանդի որգանիզմը յենթարկվում եր ուժեղ ինտոկսիկացիայի, վորից և նա մահանում եր. Միայն հազվագյուտ դեպքերում նման փոխներարկումները հաջող եյին վերջանում և հիվանդներն առողջանում:

Այդ անհաջողություններն եյին, վոր թույլ չելին տալիս, արյան փոխներարկման մեթոդը տարածվի և պատշաճ չափով զարգանա:

Հարց ե ծագում, թե ինչու ներկայումս նորից սկսեցին բավականին լայն չափով ոգտագործել կենդանիների արյունը և ինչու հիմա հետերոգեն արյան ոգտագործումը վոչ մի բարդության կամ դժբախտության տեղիք չի տալիս. Դրա միակ բացարձությունն այն ե, վոր հին ժամանակներում սխալմամբ հետերոգեն արյան փոխալցումները կատարում եյին մեծ դոզաներով, մինչդեռ ներկայումս այդ դոզաները շատ փոքր են և մահ չեն կարող պատճառել հիվանդին. Պարզ ե, վոր յեթե հիվանդին փոխալցված ե մեծ քանակությամբ հետերոգեն արյուն, ուրեմն և՛ ազլյուտինացիան և՛ որգանիզմի թունավորումը պետք ե լինեն չափաղանց մեծ ու մահացու:

Ներկայումս հետերոգեն արյունն ոգտագործում են շատ փոքր դոզաներով՝ 10,0, 15,0 կամ 20,0, վորոնք, ազլյուտինացիա առաջացնելով հիվանդի որգանիզմում, մահ չեն կարող պատճառել:


Հետերոգեն արյունը ստերիլ պայմաններում սրսկիչով վերցնում են կենդանու յերակից և ապա փոխներարկում մարդուն: Սրսկիչը կիսով չափ պետք ե լցնել վորեւ իզոտոնիկ լուծութով, լինի դա ֆիզիոլոգիական լուծույթ, գլյուկոզ ի.Պ.Կ.-ի հեղուկ, սինանտրինի թե այլ ստարիլիզատորների լուծույթ: Արյան ներարկումը պետք ե կատարել չափաղանց դանդաղորեն: Ամենից ավելի հարմար ե ոգտագործել ընտանի կենդանիների, ալծի, վոչխարի, ձիու, հորթի կամ այլ կենդանիների արյուն:

Հետերոգեն արյան երիտրոցիտները, հիվանդ մարդու որգանիզմում յենթարկվելով ազլյուտինացիայի, ազդում են այդ որգանիզմի վրա երիտրոցիտների քալքալիման նյութերով: Այդ

Նյութերը հզոր ազդակ են գլխավորապես հիվանդի ռետիկուլունդոթելիալ համակարգի համար. այդ պատճառով ել հետերոդեն արյունը նպատակահարմար ե ոգտագործել այն դեպքում, յերբ անհրաժեշտ ե լինում «զրգուել» որգանիզը, բարձրացնել նրա ընկած ուժերը կամ ավելի ուժեղացնել վերականգնման թույլ ընթացող պրոցեսները։ Հետերոդեն արյունն ոգտագործվում է գլխավորապես խոցերի, մաշկի հիվանդությունների, քրոնիկական սակավարյունության, քրոնիկական բորբոքումների, ինչպս նաև այլ պատճառներով։ Մեր ֆիլիալում հետերոդեն արյունը նույնպես ոգտագործվել ե Բասարգեշարի և Լենինականի հենման կետերի պրակտիկայում։ Յեղել ե դեպք, յերբ յերեսի քրոնիկական եկղեման բուժվել ե հետերոդեն (վոչխարի) արյան 9 ներարկումներից հետո։ Իսկ այդ հիվանդը եկղեմայով տառապել ե մոտ 10 տարի և բուժվել ե առանց հետեւանքների։ Գրականության մեջ դրական կարծիքներ կան ստամոքսի կամ տասներկումատնյա աղիքի խոցը հետերոդեն արյամբ բուժելու վերաբերյալ։ Խոցերի բուժումն ստուգված ե ունդգենյան ճառագայթներով։

Պրոֆ. Սպասովկովցիկու կլինիկայում բժ. Հարությունյանը 1932 թվից սկսած ոգտագործել ե նաև այսպես կոչված այլախմբային արյուն։ Արյունն այլախմբային ե կոչվում, յերբ նա ստար (ուրիշ) խմբի յե պատկանում. որինակ՝ լերկըրորդ խմբին պատկանող հիվանդի համար յերրորդ խմբի արյունը այլախմբային ե։

1-ին, 2-րդ, 3-րդ խմբերի համար 4-րդ խմբի արյունն այլախմբային ե։ Ինչպես և հետերոդեն արյունը, այլախմբային արյան երիտրոցիտները հիվանդի որգանիզմում յենթարկվում են ազլյուտինացիայի և ապա հեմոլիզի ու իրենց քայլական նյութերով ազդում, գրգռում են հիվանդի ռեթիկուլունդոթելիալ համակարգը։ Այլախմբային արյունը նույնպես ոգտագործվում ե միևնույն դոզաներով, ինչպես և հետերոդեն արյունը։ Ցուցանիշները նույնպես միևնույնն են։ Մեր պրակտիկայում այլախմբային արյան ոգտագործման մոտ 40 դեպք ե յեղել, այն ե՝ մալարիայի, արյան պակասության, խոցերի, մաշկի, ինչպես նաև այլ հիվանդությունների ընթացքում։ Ամեն անգամ այդ բուժման մեթոդից ստացվում են միանգարան համոզեցուցիչ և դրական արդյունքներ։





А 1936 г.  
АНТ № 58  
Вклады



256

Г 2-2965а

ԳՐԱՎ 1 թ.




✓ 4

Проф. Р. ЕОЛЯН

Переливание крови

Гиз ССР Армении, Эривань, 1936





3143

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



220035662

A  
Ansel

